

ՀԱԼԵՊԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՈՒՄԻՆ ԶՈՐ ԳԱՑԱԾ ԵՆ ՆԱԵՒ ՀԱՅԵՐ



Հալեպի մէջ տեղի ունեցած պայթուցիկի տուժած շէնքեր

Կիրակի, Մարտ 18-ին Հալեպի հայաշատ Սուլէյմանիէ թաղամասին մէջ ակննապատ մեքենայի պայթեցման զոհ գացած է Արաքսի Պետրոսեան: Թիրախը եղած է զինուորական կեդրոն մը, որու առջեւ կատարուած պայթուցիկ հետեւանքով վիրաւորուած են նաեւ երեք հայեր:

Նոյն օրը, մայրաքաղաք Դամասկոսի կեդրոնական թաղամասերէն Մեզզէյի մէջ, Հայաստանի դեսպանատան մօտ տեղի ունեցած է փոխհրաձգութիւն կառավարական ուժերու եւ ապստամբներու միջեւ:

Սուրիահայ համայնքի ներկայացուցիչ, «Փիւնիկ» հիմնադրամի նախագահ Գաբրիէլ Զամպարճի «Ազատութիւն» ռատիոկայանին հեռախօսով փոխանցած է, որ հակառակ Հալեպի մէջ հայ քաղաքացիի զոհուելու փաստին, սուրիահայ համայնքէն ներս խուճապ չկայ:

Զամպարճին ըսած է, թէ տեղի ունեցած ահաբեկչութիւնը ուղղուած էր յատկապէս Սուրիոյ

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ԻՐԵՆՑ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Մայիս 6-ին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ, Հայաստանի շարք մը կուսակցութիւններ սկսան հրապարակել իրենց մեծամասնական թեկնածուներու անունները եւ համամասնական ընտրական ցուցակները:

Կիրակի, Մարտ 18-ին իրենց թեկնածուներու անունները հրապարակեցին ԲաժՖի Յովհաննիսեանի գլխաւորած «Ժառանգութիւն» կուսակցութիւնը եւ իշխող Հանրապետական կուսակցութիւնը:

Նորաստեղծ «Ազատ Դեմոկրատներ» կուսակցութեան հետ դաշինք կազմելէ ետք, «Ժառանգութեան» ցանկին վրայ առնուած են այդ կուսակցութեան շարք մը անդամներ:

Համամասնական միատեղ ցուցակը կը գլխաւորէ ԲաժՖի Յովհաննիսեան, երկրորդը՝ «Ազատ Դեմոկրատներու» նախագահ Խաչատուր Քոբրեյեան է, որուն կը յաջորդեն պատգամաւոր Զարուհի Փոստանջեան, նախկին արտաքին գործոց նախարար, «Ազատ Դեմոկրատներու» ղեկավար անդամ Արեքսանդր Արզումանեան, Ռու-

բէն Յակոբեան եւ ուրիշներ: «Ժառանգութեան» ցուցակը զարմանք յառաջացուց քաղաքական մեկնաբաններու մօտ, նկատի առնելով որ, ներկայ պատգամաւորներէն շատեր յայտնուած են ցուցակի վարի՝ «ոչ անցողիկ» տեղերուն մէջ, փոխարինուելով նոր ու լայն հասարակութեան համար անծանօթ դէմքերով:

Նոյն օրը իր ընտրական ցուցակը հրապարակեց Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը: 250-հոգիանոց ցուցակը կը գլխաւորէ Սերժ Սարգսեան, որուն կը յաջորդեն Ազգային ժողովի նախկին նախագահ Յովիկ Աբրահամեան եւ վարչապետ Տիգրան Սարգսեան:

Յաջորդ տեղերուն վրայ են Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեան, Ազգային ժողովի նախագահ Սամուէլ Նիկոյեան, Սփիւռքի նախարար Հրանտը Յակոբեան, խորհրդարանի Հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեան, կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեան, Ազգային ժողովի ֆի-

Շաբ.ը էջ 5

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ Է ԵՒՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻՆ



Եւրագէս-ի նիստին մասնակցող նախկին խորհրտային հանրապետութիւններու նախագահներու հանդիպումը

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ ԺԱՄԱՆԱԾ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մայիս 6-ի մէջ տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններուն առթիւ Հայաստան սկսած են ժամանել միջազգային դիտորդական խումբերը: ԵԱՀԿ-ի ժողովրդավարական Հաստատութիւններու եւ Մարդու իրաւունքներու Գրասենեակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) դիտորդական առաքելութիւնը կը ղեկավարէ Մակեդոնիայի ընդդիմութեան նախկին ղեկավար Ռադմիլա Շեկերինսկա:

Շեկերինսկա 40 տարեկան է եւ նախապէս եղած է իր երկրի փոխվարչապետ եւ «Սոցիալ-դեմոկրատական Միութիւն» կուսակցութեան նախագահ:

Տիկին Ռադմիլա Շեկերինսկա Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցած է առաքելութեան մանուաղը, ինչպէս նաեւ գործունէութեան ծաւալն ու շրջանակները:

Յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Հայաստան պիտի ուղարկէ 250 կարճ ժամկէտով եւ 24 երկարաժամկէտ դիտորդ: Այս թիւը աւելի քիչ է, քան 2007-ի խորհրդարանական եւ 2008-ի նախագահական ընտրութիւններուն հետեւած դիտորդներու թիւը:



Եւրագէսի դիտորդական խումբի ղեկավար Ռադմիլա Շեկերինսկա

նուազեցումը կասկած յառաջացուցած է ընդդիմադրութեան մօտ, որ եւրոպական կառույցները լուրջ մօտեցում ցոյց չեն տար Հայաստանի ընտրութիւններուն վերաբերեալ ու այդպիսով առիթ կու տան իշխանութիւններուն՝ անգամ մը եւս կեղծելու ընտրութիւնները:

Կեդրոնական Ընտրական Յանձնաժողով ղիմած ներկայացուցած են նաեւ 10 տեղական դիտորդական կազմակերպութիւններ:

Աշխատանքային այցով Մոսկուա գտնուող Նախագահ Սերժ Սարգսեան Մարտ 19-ին մասնակցած է Եւրասիական տնտեսական ընկերակցութեան (Եւրագէս) միջպետական խորհուրդի նիստին: Ինչպէս կը տեղեկացնէ Հայաստանի նախագահի մամուլի ծառայութիւնը, նիստին ներկայ եղած են Եւրագէս-ի անդամ պետութիւններէն՝ Ռուսաստանի, Պելառուսի, Ղազախիստանի, Խրիզիստանի, Տաճիկիստանի, ինչպէս նաեւ Եւրաս-

իական տնտեսական ընկերակցութեան մէջ դիտորդի կարգավիճակ ունեցող պետութիւններու՝ Հայաստանի, Ուքրանիոյ, Մոլտովայի նախագահները:

Քննարկումները ուղղուած եղած են Եւրագէս-ի հիմնարկներու վերակազմաւորման ու անոնց գործունէութեան արդիւնաւէտութեան բարձրացման, Եւրասիական տնտեսական տարածքի ընդլուծման գործընթացներու հետագայ զարգացման:

ԻՆՉ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ» Է ՄՏԱՆԱԼՈՒ ՅԱԶՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

ԱՐՓԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Անկեղծ ասած՝ չնայած բոլորը խիստ ոգեւորուած էին «Ազատ դեմոկրատներ-Ժառանգութիւն» դաշինքով, բայց եւ այդպէս էլ չհասկացայ նման միաւորման իմաստը: Եթէ «Ժառանգութիւն» կայացած կուսակցութիւն է, խորհրդարանական հնգամեայ անցեալով, եթէ նրա անդամները տարիներ շարունակ աշխատել են Ազգային ժողովում եւ խոստովանենք՝ բաւական ակտիւ, եթէ եղել են ժողովրդի հետ՝ ամէն ահագնագի արձագանքելով ու աջակցելով մարդկանց ինդիւիդուալ, ապա ինչ-ների՞ն էր պէտք նոր ստեղծուած, չկայացած եւ քաղաքական դաշտում լրիւ անյայտ մի ուժի հետ համագործակցելը: Ո՞վ կարող է ասել, թէ ինչ են ուզում այս ազատ դեմոկրատները, ինչ պլատֆորմով են հանդէս գալիս, ինչ են անելու խորհրդարանում, ինչ քանով են անկախ իշխանութիւնից: Զէ որ այդպէս էլ մինչեւ վերջ չհերքուեց Լեւոն Տէր-Պետրոսեանի մեղադրանքների բովանդակութիւնը, երբ ամիսներ առաջ այս խումբը դուրս էր գալիս ՀՀԾ-ից:

Բայց ինդիւիդուալ դա էլ չէ: Անգամ եթէ ընդունենք, որ «Ժառանգութեանը» թարմ «արեան» ներարկում էր պէտք եւ այդ առումով ԱԴ-ից աւելի յարմար ուժ չկար, համամասնական ցուցակի կազմման սկզբունքն անհասկանալի մնաց: Ինչպէ՞ս կարող է նորաթուի ուժն ու տասնամեակի պատմութիւն ունեցող, մի անգամ ընտրութիւններում յաղթած կուսակցութիւնը հաւասար համասարնութեամբ ցուցակ ձեւաւորել:

Եթէ անգամ թողնենք միւս բոլոր կասկածները, ապա չենք կարող չհամաձայնել, որ այստեղ ինչ որ ուժի պարտադրանք կայ՝ միջազգային ուժ է, թէ ներքին, պարտուելու վախ է, թէ ինչ-որ այլ կախուածութիւն, դժուարանում եմ ասել: Ամէն դէպքում կազմուել է մի ցուցակ, որը բազում հարցերի տեղիք է տալիս:

Ասենք, համեմատաբար վերջերս «Ժառանգութեան» անդամ դարձած Ռուբէն Յակոբեանը, որին բոլորը «դաշնակ Ռուբիկ» են ասում, յայտնուել է 5-րդ հորիզոնականում, իսկ Արմէն Մարտիրոսեանը, որը «Ժառանգութեան» ամենատարիւնաւէտ եւ ամենատարագաշարժ պատգամաւորներից էր, 16-րդն է եւ քիչ հաւանական է, որ Աժ անցնի: 6-րդ տեղում յայտնուած Թեւան Պողոսեանն, ընդհանրապէս այս դաշինքի «քինդեր-սիւրպրիզն է»:

Նա իշխանամետ հասարակական կազմակերպութիւններից մէկի նախագահն է եւ յայտնի է ՀՀ նախագահական նստավայրի հետ ունեցած սերտ կապերով: 7-րդ տեղում ԱԴ անդամ Մասիս Այվազեանն է՝ նախկինում ներքին գործերի փոխնախարարի պաշտօնը զբաղեցրած: Բայց չզիտես ինչու ցուցակում չկայ Արարատ Զուրաբեանի անունը, որը ԱԴ հիմնադիրներից է:

Լուրերը, թէ նա կամովին է հրաժարուել, կարծում եմ, խիստ չափազանցուած են եւ չեն համապատասխանում իրականութեանը: Մտցոյա Սաֆարեանը 8-րդն է, նա նաեւ մեծամասնականով է առաջադրուելու՝ Աւանի

տարածքն ընդգրկող թիւ 1 ընտրատարածքում: Յաջորդ՝ 9-րդ տեղում յայտնուած աղջկան՝ բլոգեր Իգաբելլա Աբգարեանին, լաւ են ճանաչում ինտերնետի օգտատերերը: Վերջինս նոյնպէս իշխանամէտի համբաւ ունի եւ դա անգամ չի թաքցնում իր բլոգում:

Միայն 11-րդ տեղում է ԱԴ փոխնախագահ Անուշ Սեդրակեանը, որը որպէս քաղաքագետ, որպէս դասախօս եւ ընդհանրապէս՝ որպէս առաջադեմ կին, արժէք, որ խորհրդարանում յայտնուէր, սակայն քիչ հաւանական է, որ կը լինի, քանի որ 7 մանդատը թերեւս կը լինի առաւելագոյնը, որ կ'ունենայ այս դաշինքը: Այս ցուցակում ուրիշ տարօրինակ բաներ էլ կան: Ասենք՝ «Ժառանգութեան» երիտասարդների՝ Դաւիթ Սանասարեանի եւ Յովսէփ Խորշուդեանի, ինչպէս նաեւ Լարիսա Ալավերդյանի ետին տեղերը: Կարինէ Յակոբեանի՝ ընդհանրապէս չընդգրկուելը:

Ողջ օրուայ ընթացքում դաշինքի անդամները նշում էին, որ ցուցակը կարող է փոփոխուել: Դեռ երկու օր կայ եւ այն ներկայացուած չէ ԿԸՅ: Ասում էին, որ բանակցութիւններ են գնում, դժգոհութիւնները շատ են: Եւ այս ամէնը խօսում է այն մասին, որ մեր քաղաքական դաշտը չի կայացել: Աւելին՝ չկան յստակ սկզբունքներ ու գաղափարներ: Մարդիկ այս կամ այն կուսակցութեանը հարում են պարզ շահի ու կերակրատաշտին մօտ լինելու նպատակով: Իսկ կուսակցութիւնների ղեկավար կազմն ընդունակ չէ օբիեկտիւ, արդարացի որոշումներ կայացնել եւ մարդկանց գնահատել ըստ արժանիքների:

Ըստ էութեան, կուսակցական ցուցակները կազմելիս գործում է մի սկզբունք՝ ումից աւելի շատ վտանգ կայ եւ աւելի շատ օգուտ: Սրանց գրում են ցուցակի անցողիկ տեղերում: Նրանք, ովքեր տարիներ շարունակ համեստօրէն աշխատում են եւ «ատամ» ցոյց չեն տալիս, նրանց կարելի է անտեսել, մղել ցուցակի ետնամաս, համոզել, որ սպասի, խաբել, որ մի երկու տարուց իր հերթն էլ կը հասնի: Ամօթանք տալ, որ տեղի կուր չտան եւ այն: Հակառակը՝ կարելի է դրսից «լեզեռներն» բերել, վարձու աշխատուած, որի ոչ օգտակարութիւնն է հասկացուած, ոչ արժանիքներն են պարզ: Իբր՝ անկուսակցականների ներգրաւելը բարձրացնում է ցուցակի արժէքը:

Իսկ իրական պատճառն այն է, որ կուսակցութիւններն այնքան են արժեզրկուել մեզանում, որ կուսակցութիւնն արժեւորելու ձեւը տեսնում են անկուսակցականներին, իբր՝ մտավորականներին ներգրաւելու մէջ:

Եւ մի բան էլ. այս ընտրութիւնները ցոյց տուցին, որ քիչ-չատից աւելի յարգուած ու գնահատուող համարում են լրագրողները, որոնց ինչքան էլ քարկոծում են, բայց մտնում են ցուցակների մէջ, որ իրենց կորսուած հեղինակութիւնը վերականգնեն եւ քուէներ շահեն:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

ԻՆՉ Է ԱՆՈՒՄ ՔՈՉԱՐԵԱՆԸ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

ՅԱԿՈՐԲԱԴԱՆԵԱՆ

Հայրենական մամուլում տեղեկութիւն է յայտնուել այն մասին, որ Ռոբերդ Քոչարեանը Մոսկուայում հանդիպել է նորընտիր նախագահ Պուտինի հետ, եւ տեւական հանդիպման ընթացքում քննարկուել են բաւական լուրջ քաղաքական հարցեր:

Ուշագրաւ է, որ այդ տեղեկութիւնը շրջանառութեան մէջ է յայտնուել Ազատ դեմոկրատների համագումարում վարդան Օսկանեանի ներկայացուածութեանը, ԲՀԿ համագումարին, նաեւ ՀՀԿ, Կոնգրես, Ժառանգութիւն եւ Ազատ Դեմոկրատներ կուսակցութիւնների համամասնական ցուցակների հրապարակմանը գուզահետ: Կարծես թէ փորձ է արուած այդ գործընթացների ֆոնին լիչեցնել, որ քաղաքական գարգացումներում կայ Ռոբերդ Քոչարեանն ու նա ամենեւին հետ չի քաշուել դրանց միջամտելու մտադրութիւնից,

Թէ ինչ են խօսել Քոչարեանն ու Պուտինն իրականում, պարզ չէ: Նրանք կարող էին քննարկել գուտ բիզնես հարցեր, նկատի ունենալով համատեղ ներկայացուածութիւնը տարբեր բիզնես նախագծերում, նաեւ այն, որ Ռոբերդ Քոչարեանը Ռուսաստանի խոշորագոյն բիզնեսի ներկայացուցիչներից մէկի՝ Սիստեմա ընկերութեան տնօրէնների խորհրդի անդամ է: Նրանք կարող էին իհարկէ քննարկել նաեւ լուրջ քաղաքական հարցեր:

Հետաքրքրական է, որ Փութինի հետ վերջին հանդիպումից յետոյ, ռուսական Ռեզնում գործակալութիւնը Փութինի աշխատակազմի անունից հերքեց Քոչարեանի գրասենեակի տարածած տեղեկութիւնը, թէ հանդիպում է եղել: Բայց յետոյ հանդիպումը նոյն աղբիւրն էլ հաստատեց: Քոչարեանի գրասենեակը այդ արանքում լուրջութիւն էր պահպանել, թերեւս փորձելով հասկանալ, թէ ինչն ինչոց է, ինչու Փութինը չի ցանկանում հրապարակել իրենց հանդիպումը:

Հետաքրքիր է, թէ ինչ կը լինի այժմ: Բայց, կասկած չկայ, որ տեղեկատուութեան թիրախը իշխանական ճամբարն է, որպէսզի այստեղ կրկին վերակուեն գուշակութիւնները, թէ իրականում ինչ ծրագրեր ունի Ռոբերդ Սեդրակովիչը եւ արդեօք այս կամ այն քայլն անելիս իրենք չեն հակադրուում այդ ծրագրին ու յայտնուում նրա հնարաւոր թիրախի դերում:

Իսկ որ Հայաստանի իշխանական ճամբարում առաջին եւ թերեւս միակ մտահոգութիւնը հենց սեփական մաշկի անվտանգութիւնն է՝ դրա հովանաւորի ճիշդ ընտրութիւնը, կասկած չկայ:

Միւս կողմից, այն, որ Ռոբերդ Քոչարեանը փորձում է այդպէս ազդել իշխանական միջավայրի վրայ, թերեւս վկայում է, որ նրա իրական ազդեցութեան լծակներն աստիճանաբար նուազում են, այլապէս ինֆորմացիոն ազդեցութեան տարբերակի կարիք

ամենեւին չէր լինի:

Այստեղ սակայն կայ նաեւ մէկ այլ էական ինդիք: Բանն այն է, որ Ռոբերդ Քոչարեանը մի քանի ամիս առաջ անդրադառնալով Հայաստանի քաղաքական գարգացումների վրայ Փութինի վերադարձի հնարաւոր ազդեցութեան ինդիքին, յայտարարեց, թէ անկախ երկրում պարզապէս իրաւունք չկայ ներքին գարգացումները պայմանաւորել որեւէ երկրում տեղի ունեցող իշխանութեան ձեւաւորման գործընթացներով:

Ռոբերդ Քոչարեանի այդ իրապէս դիպուկ եւ արդարացի դիտարկումը սակայն կասկածի տակ է առնուում նաեւ հենց իր իսկ գործողութիւններով, երբ նա Մոսկուայում խորհրդաւոր հանդիպումներ է ունենում Փութինի հետ, «քննարկում լուրջ քաղաքական հարցեր», բայց հանրութեանը շատ քիչ տեղեկատուութիւն տալիս այդ ամէնի շարժառիթի մասին, կամայ թէ ակամայ տեղ թողնելով թէ ներքաղաքական, թէ գուտ ներքին իշխանական կանխագուշակութիւնների, ենթադրութիւնների եւ ինտրիզների սրման համար:

Այլ կերպ ասած, Ռոբերդ Քոչարեանն այդպիսով ինքն իր իսկ տուած ձեւակերպումը հաւասարեցնում է գրոյցի, նպաստելով ընդամէնը Հայաստանի ներքաղաքական եւ ներքինական գարգացումներում Ռուսաստանի ազդեցութեան աւելացմանը, երբ ինֆորմացիոն փոքր տեղեկութիւններով Ռուսաստանը կարող է կառավարել քաղաքական դաշտն ու իշխանութեան ձեւաւորման գործընթացը:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏԵԱԹԵՐԹ՝
 ԱՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՄԱՍԻՍ
 ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՐԱՅԱՍԱՆ

ՅԱԿՈՒԲԵԱՆԸ ԱՆԱՐԴԱՐ Է ՅԱՄԱՐՈՒՄ «ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ» ՅԱՄԱՍԱՍՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ

«Ժառանգութիւն» կուսակցութեան արդէն նախկին քարտուղար Կարինէ Յակոբեանի ներկայացմամբ, կիրակի օրը հրապարակուած «Ժառանգութիւն» ու «Ազատ դեմոկրատներ» կուսակցութիւնները եւ քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչների համատեղ համամասնական ցուցակը անարդար է:



«Ժառանգութիւն» կուսակցութեան քարտուղար Կարինէ Յակոբեան

Յակոբեանի խօսքով՝ «Ժառանգութեան» մասով ցուցակը կազմել է կուսակցութեան նախագահ Բաֆֆի Յովհաննիսեանը՝ իր խորհրդատուների, մասնաւորապէս, կուսակցութեան փոխնախագահ Ռուբէն Յակոբեանի եւ մամուլի խօսնակ Յովսէփ Խուրշուդեանի հետ միասին:

«Ժառանգութեան» վարչութիւնից ինքը միակը չէր, ով դժգոհեց ցուցակից:

«Անարդար էր նրանով, որ իւրաքանչիւրը իր անուան, կենսագրութեան, գիտելիքների հիման վրայ պէտք է տեղ ունենայ», - Երկուշաբթի, Մարտ 19-ին կայացած ասուլիսում յայտարարեց Յակոբեանը՝ շարունակելով. - «Համամասնական ցուցակը՝ շատ անակնկալ էր ինձ համար, վարչութեան անդամների համար՝ եւս, անակնկալ էր առանց բացառութեան բոլոր նրանց համար, ովքեր տեղեակ չէին ցուցակին»:

«Շատերն են դէմ, շատերն են բողոքում, բայց իմ եւ նրանց տարբերութիւնն այն է, որ նրանցից շատերը յայտնի են դարձել հասարակութեանը շնորհիւ «Ժառանգութեան», շնորհիւ Բաֆֆի Յովհաննիսեանի, եւ նրանք այսօր անկախ չեն իրենց քայլերի մէջ», - ասաց նա՝ անդրադառնալով նաեւ Լարիսա Արապելեանի՝ ընտրապայքարից դուրս գալու մասին յայտարարութեանը. - «Վարչութեան նիստի ժամանակ Լարիսա Արապելեանը յայտարարեց, որ ինքը դուրս է գալիս ընտրապայքարից՝ ե՛ւ մեծամասնական, ե՛ւ համամասնական: Ես կարծում եմ, որ [նրա որոշման հարցում] ցուցակի տրամաբանութիւնը դեր է ունեցել»:

Կարինէ Յակոբեանը տեղեկացրեց, որ ինքը դուրս է եկել «Ժառանգութիւն» կուսակցութիւնից, եւ պատճառն էլ հենց համամասնական ցուցակի կազմման եղանակն էր: Ըստ Յակոբեանի՝

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՋՈՒՄ Է 50+1 ՏՈՎՈՍ ՄԵԾԱՍԱՍՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ

Իշխող Հանրապետական կուսակցութիւնը միայն իր համամասնական ցուցակով ակնկալում է ստանալ ընտրողների 40 տոկոսի ձայները: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում փոխանցեց Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբեանը:

ապա իշխող ուժը կը ստանայ նաեւ երկրապահների մեծամասնութեան աջակցութիւնը:

«Դա ե՛ւ սոցիոլոգների հաշուարկներ է, ե՛ւ մեր հաշուարկներն է: Մենք չենք ուզում դառնալ, ինչպէս խորհրդային տարիներին՝ ասենք 99 տոկոս հաւաքող կուսակցութիւն: Ժողովրդավարութիւնը ակնկալում է 51-ից 61 տոկոս: 61-ից այն կողմ կարծես թէ ինչ-որ բան այն չէ: Եւ մենք այդ 40-ով բաւարարուած ենք՝ պլյուս, իհարկէ, մեծամասնականը: Այդ 50+1-ը մեծամասնութիւն մենք ուզում ենք ունենալ, որպէսզի Ազգային ժողովում կարողանանք հանգիստ աշխատել», - ասաց Ռազմիկ Զոհրաբեանը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ինչո՞ւ որոշեցին իրենց ցուցակում նաեւ երգիչների, լրագրողների ընդգրկել, Զոհրաբեանն ասաց. - «Պատկերացնո՞ւմ էք, որ ասենք չոր-չոր միայն քաղաքական գործիչներ ներկայացնենք: Ի՞նչ վատ է, ասենք, երգիչներ, թէկուզ թող պարողներ էլ լինեն»:

Ռազմիկ Զոհրաբեանին հարցրեցինք նաեւ, թէ ինչո՞ւ է Հանրապետականն իր համամասնական ցուցակի անցողիկ տեղերում ներգրաւել ոչ հանրապետականների: Արդեօ՞ք դա նշանակում է, որ իշխող ուժը այնքան էլ վստահ չէ իր ուժերին: Հանրապետականի փոխնախագահն ասաց, թէ իրենք այդ ցուցակով ներկայացնում են ամբողջ Հայաստանը՝ ընդգրկելով հասարակութեան բոլոր շերտերին, ռազմական ոլորտից, օրինակ, ներգրաւել են ԵԿՄ՝ նախագահ Մանուէլ Գրիգորեանին:

Ի դէպ, օրերս համացանցում են յայտնուել կադրեր, որտեղ երեւում է, թէ ինչպէս է Սիւնիքի մարզպետ Սուրիկ Խաչատրեանը հարուածում գործարար Սիլվա Համբարձումեանին: Հետեւաբար Ռազմիկ Զոհրաբեանին հարցրեցինք, թէ ինչո՞ւ են Սիւնիքի մարզպետին այդ միջադէպից յետոյ իրենց ցուցակում ընդգրկել, արդեօ՞ք տեղի ունեցածը չի վնասի Հանրապետականին:

Ի դէպ, Զոհրաբեանի համոզմամբ, քանի որ ԵԿՄ նախագահը Հանրապետականի ցուցակում է,

«Նրանք, ովքեր նման արարքներ են անում, բնականաբար, ներսում նախատինք ստանում են», - նշեց Զոհրաբեանը: - «Բայց եթէ մենք փորձենք ամէն մի թեթեւ ընդհարումից մարդկանց հանել կուսակցութիւնից, ապա կարող է կուսակցութիւնում մնամ մենակ ես», - կատակեց Հանրապետականի փոխնախագահը:

Ի դէպ, անդրադառնալով նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարեանին, ով ցուցակի 10-րդ համարն է, Ռազմիկ Զոհրաբեանը նշեց, որ յայտնի դէպքերից յետոյ նա իր պատիժը ստացել է հրաժարականի տեսքով եւ ամէն անգամ նոյն բանի համար պէտք չէ նախատել կամ պատժել:

ԲՅԿ-Ն ՇԵՇՏՈՒՄ Է ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՒՐՈՒԹԻՒՆԸ



Տեսարան «Բարգաւաւ «Հայաստան» կուսակցութեան համագումարէն

Կարէն Դեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրի մեծ դահլիճում Շաբաթ, Մարտ 17-ին կայացաւ «Բարգաւաւ Հայաստան» կուսակցութեան 6-րդ արտահերթ համագումարը:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ վերջերս «Բարգաւաւ Հայաստան»-ին անդամագրուած նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը՝ աւելի սուր շեշտադրումներով: Վկայակոչելով Ազգային վիճակագրական ծառայութեան վերջին տուեալները, ըստ որոնց Հայաստանի բնակչութիւնը 2011-ին կազմել է 2 միլիոն 871 հազար մարդ, նա ընդգծեց. - «Մա նշանակում է, որ մենք իջել ենք 3 միլիոնի հոգեբանական շեմից, եւ այլեւս չենք կարող ասել, որ 3-միլիոնանոց երկիր ենք, որովհետեւ չենք: Ակնյայտ է, որ եթէ առաջիկայ տարիներին Հայաստանում սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ բարոյա-հոգեբանական իրավիճակը կտրուկ չփոխուի, ոչ հեռու ապագայում մենք արդէն հատած կը լինենք 2,5 միլիոնի շեմը: Ինչո՞ւ են մարդիկ գնում: Նրանք գնում են, որովհետեւ կորցրել են յոյսը կորցրել են երկրի ապագայի նկատմամբ, որովհետեւ յոյսել են անարդարութիւնից, որովհետեւ չեն վստահում»:

Համագումարին ներկայ էին երկրի նախագահ Սերժ Սարգսեանը, Ազգային ժողովում ներկայացուած բոլոր քաղաքական ուժերի ղեկավար ներկայացուցիչներ, հիւրեր արտասահմանից:

Ո՛չ Գագիկ Մառուկեանը, ո՛չ Վարդան Օսկանեանը չպատասխանեցին լրագրողների հարցերին: Մառուկեանն ու հանրապետականի թիմը Սերժ Սարգսեանին ուղեկցելով հեռացան ծառայողական մուտքից: Իսկ Վարդան Օսկանեանն ասաց, որ շտապում է եւ հեռացաւ:

Իր ելոյթում կուսակցութեան առաջնորդ Գագիկ Մառուկեանը, ընդգծելով գալիք խորհրդարանական ընտրութիւններն ազատ, արդար եւ համերաշխութեան մթնոլորտում անցկացնելու անհրաժեշտութիւնը՝ ասաց. - «Ամենայն պատասխանատուութեամբ յայտարարում եմ, որ մենք անելու ենք հնարաւորը ընտրողի քուէն պաշտպանելու համար, ընտրողների իրաւունքը պաշտպանելու համար, եւ բոլոր այն քաղաքական ուժերին, որոնք մեզ հետ պատրաստ են պայքարել յանուն ազատ եւ արդար ընտրութիւնների, մենք համարում ենք մեր դաշնակիցներն ու գործընկերները»:

«Մեզ պէտք է ոչ թէ թշնամանք, այլ սթափ մրցակցութեան մթնոլորտ», - ընդգծեց Մառուկեանը՝ յաւելելով, թէ առաջիկայ ընտրութիւններից է կախուած մեր երկրի հետագայ ճակատագիրը:

«ՑՆՑՈՒԱԾ ԵՄ ԲՅԿ-Ի ՑՈՒՑԱԿԻՑ». ԱՐԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

«Ցնցուած եմ, մեղքս գալիս են», - Tert.am-ի հարցին, թէ ինչպիսի տպաւորութիւն ունէք ՀՀԿ-ի համամասնական ցուցակից, որից առաջին 76 անձինք յայտնի են, ասաց ՀԱԿ -ին մաս կազմող ՀՀՇ վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը:

Նրա խօսքով՝ ՀՀԿ-ի ցուցակը քաղաքական ցուցակ չի, իսկ ցուցակն էլ քաղաքական չի, քանի որ «քաղաքական թիմ չի»:

Արամ Մանուկեանը նաեւ նշեց, որ անկախ ՀՀԿ-ի ցուցակի այս բովանդակութիւնից, ՀՀԿ-ն առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում յաղթելու որեւէ հնարաւորութիւն չունի: «Ի վերջոյ այս ցուցակը կապ չունի ժողովրդի համակրանքի հետ: ՀՀԿ-ն միեւնոյնն է յաջողութեան չի հասնի, որովհետեւ վաղուց չունի ժողովրդի աջակցութիւնը», - ընդգծեց Արամ Մանուկեանը:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՅՍ ՊԱՅԻՆ ՇԱՏ ԵՆ ԶԿՈՂՄՆՈՐՈՇՈՒԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐ»

Հայաստանում ընդհանուր ընտրազանգուածը դեռ չի կողմնորոշուել, թէ Մայիսի 6-ի խորհրդարանական ընտրութիւններում ում օգտին է քուէարկելու, ասաց Երեւանի պետական համալսարանի հոգեբանութեան ամբիոնի վարիչ Հրանդ Աւանէսեանը:

«Հասարակութեանն այսօր հետաքրքրում են սերիալները, ինչը խօսում է այն մասին, որ գուարճանքի եւ յոյսի յոյզերն են գերակշռում: Ընտրութիւնների հետ տրամադրութեան ցուցանիշները երեքն են՝ բացասական, դրական եւ չէզոք», - ասաց Հրանդ Աւանէսեանը:

Ըստ հոգեբանի՝ Հայաստանի քաղաքական մոդելը իւրօրինակ է եւ տարբերում է միւսներից: «Հասարակութեան առողջացման համար պէտք է անել կանխարգելիչ միջոցառումներ, որը պայմանաւորուած է իւրաքանչիւր անձով», - ասաց Հրանդ Աւանէսեանը:

Ըստ հոգեբանի՝ Հայաստանի քաղաքական մոդելը իւրօրինակ է եւ տարբերում է միւսներից: «Հասարակութեան առողջացման համար պէտք է անել կանխարգելիչ միջոցառումներ, որը պայմանաւորուած է իւրաքանչիւր անձով», - ասաց Հրանդ Աւանէսեանը:

ԼՈՒՐԵՐ

«ԶԱԻԱԽՔՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԵԻԱԻՈՐՄԱՆ ՎՏԱՆԳ ՉՎԱՅ»

Ռուսաստանում Ջալալաբադի անվտանգության ծախսերը անցնելու շարժումը ռուսական լրատուամիջոցներով յայտարարել էին, որ Վրաստանի տարածքում կարող է ելա մեկ պետություն առաջանալ, եւ դա կը լինի Ջալալաբադը, եթէ Վրաստանը ՆԱՏՕ-ի անդամ դառնայ:

Արձագանքելով այս յայտարարությունները, Վրաստանի արտգործնախարարի տեղակալ Նինո Քալանդաձեն, «Ինտերֆաքս» լրատուական գործակալության փոխանցմամբ, ասել է, թէ կնչյայտ է՝ դրա հետեւում Ռուսաստանն է կանգնած:

Պաշտօնական թեքիլիսին կարծում է, որ Ջալալաբադ անկախ պետություն ձեւաւորման վտանգ չկայ, իսկ նման յայտարարությունները հետեւում կանգնած են ռուսաստանեան ուժերը, յայտարարել է Քալանդաձեն:

Փոխարտգործնախարարի խօսքերով՝ Վրաստանի կառավարությունը յստակ ուղղվարություն ունի ազգային փոքրամասնությունների վերաբերեալ եւ այն յաջողութեամբ իրականացնում է:

«Մենք տիրապետում ենք փոքրամասնություններով բնակեցուած շրջաններում տիրող իրավիճակին եւ տեղեկատուութեանը: Մասնա-

ւորապէս Ջալալաբադում, որտեղ բնակւում են հայերը, վրացական կառավարութիւնն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ պետական գործընթացներին տեղի բնակչութեանը մասնակից դարձնելու», - ասել է Քալանդաձեն:

Վրաց դիւանագէտը նաեւ նշել է, որ Վրաստանը լաւ յարաբերութիւններ է պահպանում Հայաստանի հետ, եւ բոլոր հարցերը լուծուած են միջպետական մակարդակում ու բարեկամական միջոցառումներով:

«Մենք լաւ յարաբերութիւններ ունենք ոչ միայն Հայաստանի հետ, այլ նաեւ Վրաստանում բնակուող հայերի հետ, եւ որեւէ խնդիր այստեղ չենք տեսնում», - ասել է Նինո Քալանդաձեն:

Մեկնաբանելով ռուսաստանաբնակ Ջալալաբադի յայտարարութիւնը, թէ հայերը կարականապէս դէմ են Վրաստանի անդամակցութեանը ՆԱՏՕ-ին, Քալանդաձեն ասել է, որ Հայաստանն ինքը սերտորէն համագործակցում է Հիւսիսատլանտեան դաշինքի հետ, եւ դժուար է պատկերացնել, թէ ինչու պէտք է հայերը իրենց նկատմամբ սպառնալիք ընկալեն Վրաստանի անդամակցութիւնը ՆԱՏՕ-ին:

«ԼՂԻ ԶԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԱԻԵԼԻ ՍՕՏ ԵՆ ԼՈՒԾՄԱՆ, ՔԱՆ ԻՐԵՆՔ ԿԸ ԿԱՐԾԵՆ»

ԵԱԿԶ Մինսկի խումբի ամբողջական համաձայնագրի Ռոպրթ Պրատքէ «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանի եւրոպական ծառայութեան հետ զրոյցի ընթացքին, ԵԱԿԶ 20-ամեակին առթիւ ամփոփած է Մինսկի խումբի գործունէութիւնը՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցի առնչութեամբ՝ ըսելով, որ կողմերը աւելի մօտ են հակամարտութեան կարգաւորման, քան իրենք կը կարծեն:

«Ես կը կարծեմ Մինսկի խումբը կարեւոր բաներ ըրած է այս ընթացքին: Նախ ան նպատած է կայունութեան հաստատման եւ լարուածութեան թուլացման: Օգնած ենք կանխելու նոր պատերազմի յառաջացումը եւ եթէ անգամ 1994-էն ետք հրադադարի խախտումներ տեղի կ'ունենան, օգնած ենք, որ անոնք որեւէ աւելի լուրջ բանի չվերածուին: Կողմերը հնարաւորութիւն չունին իրարու հետ ուղիղ հարաբերակցելու, ուստի երբ մենք կը մեկնինք տարածաշրջան, կը հանդիպինք անոնց հետ եւ կը փորձենք օգնել, որ կողմերը զիրար աւելի լաւ հասկնան», - ըսած է ան:

Պրատքէ նաեւ կարեւորած է այն, որ անցնող տարիներու ընթացքին, բանակցութիւններու համար ընդհանուր հիմքեր գտնուած են, մշակուած են հիմնարար սկզբունքները՝ ԼՂ-ի յարակից տարածքներու վերադարձ Պաքոսին, տեղահանուած մարդոց վերադարձ, ԼՂ համար միջանկեալ կարգավիճակ՝ անվտանգութեան եւ ինքնակառավարում ունենալու երաշխիքներով, եւ միջանցք, որ Լեոնային Ղարաբաղը կը կապէ Հայաստանի հետ եւ հետագային ԼՂ իրաւական կարգավիճակի տրամադրում:

«Մենք դեռ յաջողութեան չենք հասած», - ըսած է ան՝ կարեւորելով Ռուսաստանի նախագահի հետ հանդիպման ընթացքին Սոչիի մէջ Հայաստանի ու Ատրպէյջանի նախագահներու ըրած յայտարարութիւնը:

Հարցին, թէ կարելի է ըսել, որ այս պահուն ԼՂ կարգաւորման հարցը աւելի մօտ է քան 20 տարի առաջ, Պրատքէ պատասխանած է.



ԵԱԿԶ Մինսկի խումբի ամբողջական համաձայնագրի Ռոպրթ Պրատքէ:

«Անկասկած, մենք աւելի մօտ ենք այսօր, քան 20 տարի առաջ: Կողմերը հասկցած են, թէ ինչպէս պէտք է ըլլայ վերջնական կարգաւորումը: Այդ տարրերը ներառուած են Լաքուիլայի, Մոսկուայի եւ անցեալ տարի Տովիլեան համաժողովներուն մէջ: Այդ տարրերը հիմա աւելի պարզ են, քան երբեք եղած են:

Անդրադառնալով հարցին, թէ որոշ փորձագէտներ կը կարծեն, որ Լեոնային Ղարաբաղի հարցը փակուղիի մէջ եւ Մինսկի խումբը նոր մօտեցումներու կարիք ունի, Պրատքէ պատասխանած է, որ խնդրը այն է, որ այս շատ դժուար հարց է: «Տարբերութիւնները կողմերու միջեւ շատ մեծ են եւ կայ վստահութեան պակաս: Այս խնդիրները դեռ պիտի շարունակուին», - ընդգծած է Պրատքէ:

Անդրադառնալով Կազանեան հանդիպման, Պրատքէ նշած է, որ իրենք Կազանի հանդիպումէն ակնկալիքներ ունէին եւ կը կարծէին, որ յառաջ ընթաց կ'ըլլայ, սակայն ոչինչ եղաւ: «Բայց այդ չի նշանակեր, որ ամէն ինչ վերջացած է: Չի նշանակեր, որ մենք չենք ունեցած կէտեր, որոնց շուրջ կողմերը համաձայնութեան եկած են: Ես չեմ ուզեր շատ մանրամասնութիւններ յայտնել, որովհետեւ շատ զգայուն բանակցութիւններ են, սակայն մենք հիմնարար սկզբունքներու շուրջ համաձայնութեան եկած ենք եւ ատիկա շատ լուրջ մարտահրաւեր է», - ըսած է ԵԱԿԶ Մինսկի խումբի ամբողջական համաձայնագրի Ռոպրթ Պրատքէ:

ճակը, գոնէ առաջիկայում, չի կայունանայ եւ առաջիկայում եւս հնարաւոր են նմանօրինակ ասաբեկչութիւններ, քրէածին տարրն է երկրում ակտիւացել, տնտեսական դրութիւնն է գնալով վատթարանում եւ, բնականաբար, նման իրավիճակում հայերի շրջանում մտահոգութիւնը պէտք է մեծանայ», - ըսած է արաբագէտը: - «Գուցէ այս փուլում հայերը մասսայական չեն արտագաղթում, կամ յատուկ խուճապի մէջ չեն, բայց եթէ իրավիճակը երկրում առաջիկայում չկայունանայ, դա անխուսափելիօրէն հանգեցնելու է արտագաղթի ընդլայնմանը»:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ԻՐԱԲԱՊԱՇՏՊԱՆ ՈԱՔԸՊ ԶԱՐԱՔՕԼՈՒԻՆ ՄԻՆՉԵՒ 15 ՏԱՐՈՒԱՆ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ

Միջամպուլի դատախազութիւնը արդէն պատրաստած է մեղադրական գործ, ըստ որուն Քրտական աշխատակողական կուսակցութեան (PKK) «Քրտական համայնքներու միութեան» (KCK), անաբեհական օգնութիւն ցուցաբերելու համար թուրք հրատարակիչ, իրաւապաշտպան, Ռաքըպ Զարաբօլուին «անաբեհական խմբաւորման աջակցութիւն ցուցաբերելու» մեղադրանք առաջադրուած է:

Եթէ մեղադրանքը հաստատուի Հայոց ցեղասպանութեան մերժողականութեան դէմ պայքարող եւ այդ գործունէութեան համար բազմաթիւ անգամներ քրէական հետապնդման ենթարկուած թուրք իրաւապաշտպանին կը սպառնայ 7.5- 15 տարուան ազատազրկում:

Ինչպէս կը տեղեկացնէ CNNturk-ը, դատախազ Ատնան Չիմենի կողմէ պատրաստուած մեղադրական եզրակացութեան մէջ փոփ. Պուշրա էրզանլըի եւ հրատարակիչ Ռաքըպ Զարաբօլուի հետ միասին 193 մեղադրեալ կայ,



Ռաքըպ Զարաբօլու բանտ կ'առաջնորդուի թուրք ոստիկանի կողմէ:

որոնցմէ 147ը ներկայիս արդէն կալանաւորուած են:

2400 էջանոց մեղադրական գործը արդէն ուղարկուած է Միջամպուլի 15րդ ծանր յանցագործութիւններու դատարան:

ՀԱԼԵՊԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՈՒՄ

Շարունակուած էջ 1-էն
քրիստոնէայ բնակչութեան դէմ: «Նման բաներ կ'ըլլան, իսկ ուժերը ազգութիւն կամ կրօն չեն ճանչնար», - ըսած է Փիւնիկ հիմնադրամի նախագահը:

Յիշեցնենք, որ մօտ մէկ ամիս առաջ նման պայթիւնի մը հետեւանքով, դարձեալ Հալէպի մէջ, գոհուած էր հայազգի զինուորական ծառայող Վիգէն Հայրապետեան:

Գաբրիէլ Զամպարօնի ռատիոկայանին փոխանցած է որ, տեղի ունեցող իրադարձութիւններու հետեւանքով հայ բնակչութեան արտահոսք չկայ: Ան ըսած է որ,

նման մտադրութիւն ունեցողները, երբ որ ուզեն, կրնան մեկնիլ Հայաստան, քանի որ Հայաստան մեկնիլը անոնց համար շատ աւելի դիւրին է, քան որեւէ այլ երկիր: Հայաստանի կառավարութիւնը, ըստ անոր, իր բոլոր կարելիութիւններով ու կառուցներով պատրաստ է օժանդակելու այն սուրիահայերուն, որոնք Հայաստան մեկնելու ցանկութիւն կ'ունենան:

Հայաստանի Գաղթականական Պետական Մառապետութեան տնօրէն Գազիլի Եգանեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին հաստատած է, որ վերջին շրջանին սուրիահայերու հոսք

դէպի Հայաստան չկայ: - «Աննշան թիւ է, խօսքը մէկ-երկու ընտանիքի մասին է», - ըսած է Եգանեան: Արաբագէտ, վերջերս հրատարակուած «Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ» գիրքի համահեղինակ Արաքս Փաշեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ ստեղծուած իրավիճակին մէջ սուրիահայերը վաղ, թէ ուշ պիտի կանգնին երկիրը լքելու մարտահրաւերին առջեւ: «Անկախ այն փաստից՝ Պաշար Ալ-Ասատի վարչակարգին կը յաջողուի պահել իշխանութիւնը, թէ ոչ, դրանից երկրում իրավի-

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԵՋ (200 ՀՈԳԻ ԸՆՏԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՆՏԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680

ՊՐՆ ԾԱՌՈՒԿԵԱՆ, ՊՐՆ ՕՍԿԱՆԵԱՆ, ԴՈՒՔ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԳՈՎԱԶԴ ԷՔ ԱՆՈՒՄ ԵՒ ՍԱՆԴԻ ՄԷՋ ՋՈՒՐ ԾԵԾՈՒՄ...

ԴՈՒՑՈՐ ԱՐԱՄԱՅԻՄ ՄԻՐՋԱԽԱՆՆԵԱՆ

Պարսիկ իմաստասէրն ասում է. «Երբ մարդ լուռ է, դժուար է կուսակցի նա գոհարարվածա՞ն է, թէ՛ բամբակ գոգո՞ւ: Իսկ հայերս ունենք ոչ պակաս իմաստուն ասացուածք, ըստ որի, շատ խօսողին ու միտք չարտայայտողին ասում են. - «Սանդի մէջ ջուր է ծեծում»:

Այս օրերին Հայաստանում քաղաքական կուսակցութիւնների համագումարների թե՛ միջնորդ է, եւ մրցադաշտը խիստ չափեցած է... Մենք՝ սփիւռքահայերս, մասնակցութիւն չունենք այս մրցավազքի մէջ, սակայն ինձ նմանները, որ Հայաստանում հարստութիւն ու բիզնես չունեն, պաշտօն ու դիրք չունեն ու ընտրելու ու ընտրուելու իրաւունք չունեն, երբեմն-երբեմն փորձում են, մեր ժողովրդի շահերից ելնելով, իրենց սրտացաւ կեցուածքը դրսեւորել այն ամէնի հանդէպ, ինչ կատարուում է Հայաստանում:

Միքէլի ընթերցող, ներողամիտ եղիր, նախաբանը երկար ստացուեց...

Խօսքս պրն Գ. Ծառուկեանի ու պրն Վ. Օսկանեանի ելոյթների մասին է՝ հնչած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) համագումարի ընթացքին: Լաւ է, որ սրանից առաջ բախտ ենք ունեցել լսելու կուսակցապետին ու ՀՀ նախկին արտաքին գործոց նախարարին, եւ նրանց գոհարարածաւ լինելու մէջ համոզուած չենք, բայց որ այսքան անորակ բամբակ կարող են գգել, այդ էլ չէի սպասում...

Պրն Ծառուկեանը ասում է. «Այսօր մենք ինքներս մեզ պէտք է հարց տանք. «Ինչպէ՞ս է ստացւում, որ Հայաստանից դուրս ապրող եւ աշխատող մեր հայրենակիցները հասնում են լրջագոյն յաջողութիւնների՝ կեանքի տարբեր բնագաւառներում դառնալով յայտնի դէմքեր, գործիչներ: Ինչպէ՞ս է ստացւում, որ հայր, արտագաղթելով օտար երկիր, կարողանում է մէկ-երկու տարում ոտքի կանգնել...»:

Յարգելի մեծահարուստ պրն Ծառուկեան, այս արտայայտութիւնը ոչ միայն անորակ բամբակ գգել է, այլ արտագաղթի բացառապէս գովազդ է: Ձեր ասածների մէջ ոչ մէկ իրականութիւն չկայ: Հայաստանից արտագաղթածների մեծ տոկոսը վատ է ապրում: Այդ մարդկանց չվիրաւորելու նպատակով չեմ նշում այն նուստացուցիչ աշխատանքների ցանկը, որով նրանք զբաղւում են Հայաստանից դուրս: Դուք լաւ գիտէք, թէ Հայաստանից գաղթած հայ կանայք ինչպիսի անպատուաբեր աշխատանքով են զբաղուած թուրքիայում, Արաբական էմիրաթներում, Իրանում եւ այլուր: Դուք եւ Ձեր կուսակցութիւնն, անշուշտ, տեղեակ էք, թէ Գալիֆոնիայի բանտերում քանի հազար հայ կանայք ու տղամարդիկ են բանտարկուած գողութեան, անառակութեան, թմրադեղերի առ ու վաճառքի մեղադրանքներով, իսկ ժուլիկութեամբ զբաղուող կազմակերպուած բանդաները «մեծ համբաւ» ունեն:

Եւրոպական սոցիալապէս առաւել բարեկեցիկ երկրներում

Հայաստանից գաղթածների՝ նպատակով ապրողների թիւը համեմատուում է սոմալիցների, թուրքերի ու բանգլադէշցիների հետ: Հայաստանի գաղթականների ծանր հոգեկան ու կարօտախտի տառապանքները գումարելով նշուածի հետ, ամէն մի ագնիւ, պատուախնդիր ու ազգասէր մարդու մօտ խորը ցաւ է առաջանում: Պրն Գազիկ Ծառուկեան, այս մարդիկ ձեր եւ ձեզ նման օլիգարխների գոհերն են: Դուք եւ Հայաստանը բռնազրաւած ձեր գործակիցներն են այս դժբախտութիւնների պատճառը:

Արդար լինելու համար մէջբերեմ ձեր հետեւեալ միտքը. ...Ուստի, մենք մեր երկրում այսօր ունենք լրջագոյն խնդիր՝ ստեղծել համապատասխան պայմաններ, ընձեռել հնարաւորութիւն, որ աշխատող մարդը չմտածի հեռանալու մասին, բարիք ստեղծի մեր երկրում»:

Գովելի ցանկութիւն է: Իսկ քսան տարի շարունակ ինչո՞վ էիք զբաղուած (ընթերցողը կ'աւի թաւանով): Յարգելի պարոն, դուք՝ Հայաստան երկիրը շահագործող օլիգարխներդ, աշխարհի առաջին ու վերջին կեղեքիչները չէք, դուք համաշխարհային դրամատիրական անարդար համակարգի մէկ օղակն էք...

Պրն Ծառուկեան, ձեր ասածների մէջ նաեւ չնչին տոկոսով ճշմարտութիւն կայ: Հայաստանից գաղթածների մի շօշափելի մաս, ունենալով Հայաստանում ձեռք բերած գիտելիքներ, իրենց ամէնօրեայ քրտնաջրան, ագնիւ ու կարգապահ աշխատանքներով, կեանքի տարբեր բնագաւառներում լուրջ յաջողութիւններ են հասել: Ուսանողները նոյնպէս գալի առաջադիմութիւններ են գրանցում: Սակայն այս հասնագամանքը ձեզ իրաւունք է Վերապահում արտագաղթի գովազդ անել, թէ դրսում ամէն ինչ լաւ է:

Պարզուած է, որտեղ դուք չկաք, այդտեղ լաւ է...

Իսկ նոր բարգաւաճած նախկին արտգործ նախարարը (ՆԱՆ)՝ պրն Վարդան Օսկանեանը ասում է. «...Մայիսի 6-ին մենք ընտրելու ենք Հայաստանի նոր խորհրդարանը: Դա սոսկ խորհրդարանական ընտրութիւն չէ, դա Հայաստանի ապագայի ընտրութիւնն է: ... Մայիսեան ընտրութիւնները իրօք Հայաստանի համար լինելու են ճակատագրական»:

Այսպիսի բամբակ պրն Օսկանեանը դեռ չէր գգել: Ոչ աւել, ոչ պակաս, «Հայաստանի ապագայի ընտրութիւնն է»:

Աստուծոյ սիրուն, մի վախեցրէք, ի՞նչ էք պատրաստուում անել: Պրն ՆԱՆ, հայ ժողովուրդը Ձեր աշխատանքի թղթապանակին լաւ ծանօթ է: Այս մասին յետոյ:

հատած կը լինենք 2,5 միլիոնի շէմը»:

Ինչպիսի դառն իրողութիւն ու ցաւալի ինքնախարագանում: Պրն ՆԱՆ, ձեր իշխանութեան տարիներին ինչքա՞ն մարդ է արտագաղթել Հայաստանից եւ ինչո՞ւ...: Իմ հարցի պատասխանն արդէն դուք տուել էք.

«Գնում են, որովհետեւ կորցրել են յոյսն ու հաւատը երկրի ապագայի նկատմամբ:

Գնում են անարդարութիւնների պատճառով:

Գնում են, որովհետեւ չեն վստահում:

Գնում են, որովհետեւ չեն կարողանում հանապազօրեայ հացը վստահել»:

Գովելի է ձեր համարձակութիւնը, այսպէս չստակ պատասխանելու համար: Խնդրում եմ նոյն համարձակութեամբ պատասխանէք. Մարտի 1-ի ոճրագործութիւնից յետոյ քանի՞ հազար մարդ է լքել Հայաստանը: Դուք այդ ժամանակ երկրի արտգործնախարարն էիք եւ մեղսակից էք: Այդքան հեշտ պիղատոսի նման ձեռքներդ լուսնալ չէք կարող, ժողովուրդը թոյլ չի տայ, իսկ պատմութիւնն անողոք դատաւոր է...

Իսկ ի՞նչ էք պատրաստուում անել:

Դուք ասում էք. «Բարգաւաճ Հայաստան» իր տնտեսական քաղաքականութեան հիմնական թիրախ է դարձնելու տնտեսական աճը, աշխատատեղերի ստեղծումը եւ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացու կենսամակարդակի բարձրացումը:

Պրն Օսկանեան, մեր ժողովուրդը կեանքի փորձ ունի, երկրում տիրող դասակարգային կեղեքիչ տնտեսական համակարգում ձեր ասածները անհնարին է, անհաստեղելի ազատ շուկայական կապիտալիստական յարաբերութիւններում: Ձեր կուսակցապետը, նրա օլիգարխիկ ընկերներն ու կաշառակերութեան ու օրինազանցութեան մէջ հմտացած իշխանու-

թիւնները, այդ թոյլ չեն տալու:

Կապիտալիստական շահագործող սիստեմը ամբողջ աշխարհում սնանկանում է... Երկրագնդի կէսից աւելին, միլիարդաւոր մարդիկ ապրում են աղքատութեան, անզրագիտութեան, գործազրկութեան, հիւանդութիւնների ու սոցիալական անպահանջութեան ծայրայեղ վիճակում: Այս բոլորը դրամատիրական համակարգի դիկտատուրայի անարդար հոլութեան արգասիքներն են... Այս համակարգը Հայաստանում հրաշք գործել չի կարող:

Ձեր խօսքը աւարտում էք. «Բոլորս՝ ընտրողներ, թէ ընտրուածներ, պէտք է նայենք մէկմէկու եւ ասենք, որ միասին աշխատանք ունենք անելու, որպէսզի մենք, մեր երեխաները, մեր ծնողները, մեր հարեւաններն ու մեր բարեկամները վստահեն իրենց եւ իրենց երկրի ապագային»:

Յարգելի նախկին սփիւռքահայ, նախկին արտգործնախարար, դուք իսկապէս սանդի մէջ ջուր էք ծեծում ու բամբակ էք գոգում եւ յարգանք չունէք ձեզ լսողների նկատմամբ: Ձեր այս տողերի մէջ մէկ հատիկ բռնութիւն միտք չկայ, ժողովրդի ու երկրի առաջ ծառայած հարցերին ոչ մէկ գիտատնտեսական մօտեցում չկայ: Դուք ձեր քննութիւնը յանձնել էք... Ժողովուրդը ձեզ՝ «Հայաստանի ապագայի ընտրութիւնը» թոյլ չի տայ...

Հայաստանին ու մեր ժողովրդին կը փրկի միայն տնտեսական համակարգային փոփոխութիւնը, որտեղ դուք «բարգաւաճելու» եւ գիշատիչ «արծիւները» մեր ժողովրդի գլխին ճախրելու հնարաւորութիւն չեն ունենալու:

Յ.Գ. Յարգելի ընթերցող, ինայելով իմ եւ ձեր ժամանակը, ՀՀԿ-ի համագումարին չեմ անդրադառնում: Այդ մասին ՋԼՄ-ներում բաւականին տեղեկութիւններ կան: Միայն աւելացնեմ, այստեղ «լոխ լաւ է», «արեւածագ» է...

ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

նանսավարկային եւ բիւջետային հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Գազիկ Մինասեան: Յանկի 10-րդ դիրքին վրայ Երեւանի նախկին քաղաքապետ Գազիկ Բեգլարեանն է:

Ցուցակի երկրորդ տասնեակին մէջ ՀՀԿ-ականներէն բացի տեղ գրաւած են՝ Երկրապահ կամաւորականներու Միութեան նախագահ Մանուէլ Գրիգորեան, երգչուհի Շուշան Պետրոսեան, «Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան առաջնորդ Արտաշէս Գեղամեան, Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցութեան նախագահ Խոսրով Յարութիւնեան եւ «Սահմանադրական իրաւունք Միութիւն» կուսակցութեան նախագահ Հայկ Բաբուխանեան:

ՀՀԿ-ի պարագային եւս, ներկայ պատգամաւորներէն շատեր յայտնուած են ցած դիրքերու վրայ:

Մարտ 20-ին, իրենց ցուցակները հրապարակեցին «Բարգաւաճ Հայաստան» եւ «Օրինաց Երկիր» կուսակցութիւնները: Առաջինի պարագային ցուցակը կը գլխաւորէ կուսակցութեան ղեկավար Գազիկ Ծառուկեան, որուն կը յաջորդէ արտաքին գործոց նախկին նախա-

րար Վարդան Օսկանեան:

Չորեքշաբթի, Մարտ 21-ին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը ներկայացուց իր 85 հոգիներէ բաղկացած ընտրական ցուցակը, որ կը գլխաւորէ Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան: Ցուցակին մէջ ընդգրկուած են ե՛ւ կուսակցականներն ե՛ւ գործարարներ:

Նոյն օրը, ընտրութիւններուն մասնակցելու ըստ ներկայացնելով իրենց ցուցակները հրապարակեցին նաեւ Հայաստանի Կոմունիստական կուսակցութիւնը եւ Արամ Սարգսեանի գլխաւորած Դեմոկրատական կուսակցութիւնը:

Յիշեցնենք որ, Հայաստանի խորհրդարանի 131 անդամներէն 41-ը կ'ընտրուին մեծամասնական կամ անհատական ընտրութիւններով, իսկ մնացեալ 90 տեղերը կ'ամբողջացուին կուսակցական ցուցակներով՝ համամասնական ընտրութիւններով: Իւրաքանչիւր կուսակցութիւն խորհրդարանէն ներս կը ներկայացուի իր ստացած ձայներու տոկոսային յարաբերութեամբ:

Խորհրդարան մուտք կը գործեն նուազագոյն 5 տոկոսը յաղթահարած կուսակցութիւնները, իսկ կուսակցական դաշինքներու պարագային 7 տոկոս եւ աւելի ձայներ ստացող դաշինքները:

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ «ՄՆՉՈՒՐԻ ԱՌԻՒԾ» ԳԱԼՈՒՍՏ ԱՐԽԱՆԵԱՆ (ՀԱՃԻ ՊԵՅ)



ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՂԵՃԵԱՆ

«Մեր անհաւասար, մեր անողորմ պայքարին մէջ Գալուստը եղաւ այն դէմքերէն մին, որ իրենց անբացատրելի անձնուրացութեամբ ցոյց տուին թէ ինչ գերբնական, ինչ արտասովոր գոհաբերութիւններու ոյժ կայ ժողովուրդի ցաւերու բողոքը մարմնացնող, անոր խտէպին դրօշակակիր եղող զինուորներու սրտին մէջ: Անձնուրացութեան այդպիսի հոյակապ, այդպիսի շքեղ օրինակներու յիշատակին առջեւ անսահման յարգանքով կը խոնարհինք եւ անգամ մը եւս կ'ամրապնդենք մեր մէջ այն հաւատքը թէ այդպիսի գոհաբերութիւններու ընդունակ ժողովուրդը անպատճառ իր փայլաբայած նպատակին պիտի հասնի վաղը կամ ուշ»:



Իրապէս ալ, կարճ ժամանակ մը անց, Գ. Արխանեան կը վերադառնայ Արմտան եւ պատուելի խաչատուր Քէրէմեանի հետ կը ստանձնէ շրջանի կազմակերպութեան ղեկավարութիւնը: Բացի Մեծ ու Փոքր Արմտան գիւղերէն, անոր ջանքերով յեղափոխական բշիջներ կը սկսին գործել Տեւրիկ, Զիմառա, Թողուտ, Ապուշտա, Հասան Օվա, Լիճք եւ Ակն գիւղերուն մէջ, որոնք իրար հետ կ'ունենան մնացուն կապ:

Այս տողերով է որ «Հնչակ» կ'անդրադառնայ Հնչակեան Կուսակցութեան առաջին սերունդի ամենէն փայլուն ներկայացուցիչներէն, ֆետայական շարժման առաջին կազմակերպիչներէն Գալուստ Արխանեանի մահուան: (1)

Գալուստ Արխանեան (Հաճի Պէյ) ծնած է Մնձուր գաւառի (Գուրուչայ) Փոքր Արմտան գիւղը 1872-ին, ունեւոր ընտանիքի մէջ: Հայրն ու հօրեղբայրը Կ. Պոլսոյ մէջ ունեցած են փոռեր:

Ծննդավայրի ծխական դպրոցը աւարտելէ ետք կը մեկնի Կ. Պոլիս եւ իր հօր փոռին մէջ կը շարունակէ հօրենական արհեստը՝ հացագործութիւն:

Պատանի տարիքէն ցոյց կու տայ կարեկցանք դէպի աղքատն ու թշուառը:

Կը ծանօթանայ հնչակեան գործիչներու եւ կը մտնէ Հնչակեան Կուսակցութեան մէջ:

Մինչ Գ. Արխանեան Կ. Պոլսոյ մէջ կը տարուէր ազատագրական գաղափարներով, անդին ամբողջ Փոքր Հայքի շրջանը, ներառեալ իր ծննդավայրը, կը դառնայ այդ շարժման կարեւոր հնոցներէն մին: Արմտանի մէջ կը կազմուի հնչակեան մասնաճիւղ մը, կազմուած առաւելաբար յանդուգն եւ տաքարիւն երիտասարդներէ, որոնք գործունէութեան հիմնական ձեւ կ'ընտրեն գիւղացութիւնը կեդեքող հայ թէ թուրք շահագործողներու ինչքերը հրկիզելն ու փճացնելը: Այս գործը կը ղեկավարէր Սարգիս Նախուրեան, որ նաեւ կապ կը պահէր Արաբկիր գտնուող Շմաւոնի (Գաբրիէլ Կաֆեան) հետ: Գործող խումբերու տասնապետներու ժողովներէն մէկուն ընթացքին կը կարդացուի նաեւ Գ. Արխանեանի Կ. Պոլսէն գրած նամակը, ուր ան կ'ըսէ. - «Դուք ցանցեցէք արտերը, եւ անմշակ մի թողուք, ժամանակն է: Ես լսելով ձեր մասին շատ ուրախ եղայ: Կը խնդրեմ մինչեւ իմ գալստ աշխատեցէք որչափ որ կրնաք. Ընկերներէս մէկը գալու է մօտակայ քաղաք մը կազմակերպութեան համար. Ես անոր նամակներ կու տամ. Ծանօթացէք ու մէկտեղ գործեցէք»: Նոյն ժողովին, գաղտնի քուէարկութեամբ, կ'ընտրուի երկու մարմին՝ վարչական եւ դատական, որոնք «Արմտանի հայկական իշխանութիւնը կազմեցին»: (2)

Ինչպէս միշտ, այս պարագային եւս, գինման հարցը կ'ըլլայ շրջանի Հնչակեաններուն գլխաւոր մտահոգութիւնը: Արդիական գէնքեր ձեռք ձգելու նպատակով, Գ. Արխանեան, մեծ մասամբ նախնական գէնքերով զինուած 80 երիտասարդներով կը կազմակերպէ դարան մը, գէնք փոխադրող կառավարական զօրախումբի մը դէմ: Այս համարձակ քայլը չի յաջողիր, որովհետեւ պետական փոխադրախումբը մինչ այդ անցած կ'ըլլայ նախատեսուած կիրճէն: Կարճ ժամանակ անց, Արխանեան կը կազմակերպէ ինը հոգինոց քիւրտ աւագակախումբի մը պաշարումն ու զինաթափումը: (3) Զէնքեր ունենալու այլ նախաձեռնութեամբ մը պատուելի Նշան Քէշիշեան կը զրկուի Կ. Պոլիս, ուր պանդխտած արմտանցիներէն եւ անոնց օգնութեամբ ձեռք կը բերէ 10 տարեանակ եւ 500 փամփուշտ: Սակայն Կ. Պոլսոյ արմտանցիներուն մէջ գտնուող լրտես Բերովը Քէօսէեան, կը մատնէ եղածը: Կիրաստնի նաւահանգիստին մէջ Ն. Քէշիշեան կը ձերբակալուի եւ գէնքերը կը գրաւուին: (4) Գ. Արխանեան կաշառքի եւ իրեն ծանօթ ազդեցիկ պաշտօնատարներու միջոցով կարճ ժամանակի մէջ կը յաջողի բանտէն ազատել Նշան Քէշիշեանը: (5)

Մինչեւ շրջանին մէջ յեղափոխական հայ երիտասարդներու հրապարակ գալը, Տերսեմի եւ Օվաճըզի քիւրտ ցեղախումբերը աւագակային յարձակումներ կը կատարէին հայկական գիւղերուն վրայ ու կը յափշտակէին նախիրը: Այժմ, անոնք կը հանդիպին ընդդիմութեան՝ ընդհուպ զինեալ: Իշխանութիւնները կը սկսին աւելի աշալուրջ հետեւիլ կատարուող իրադարձութիւններուն, որովհետեւ անոնք սկսած էին համոզուիլ որ Փոքր Հայքի շրջանին մէջ գաղտնի կազմակերպութիւն մը գոյութիւն ունի: Իշխանութիւնները կը գիմեն իրենց ամենէն

փորձուած միջոցին, իմա՝ հայ լեղափոխականներուն ամենէն մեծ պատուհասին՝ հայ լրտեսներուն:

1891 Օգոստոսին, Լիք գիւղին մէջ լրտես Պետրոս Պուտաբեանի ցուցմունքով կը ձերբակալուի զիւրի կազմակերպութեան պատասխանատու խաչատուր Մելքոնեան վարժապետը, որուն մօտէն կը գրաւուին կարգ մը թուղթեր: Գ. Արխանեան, դէպքերու դէշ ընթացքին առաջը առնելու համար, յանձնարարականով մը Արմտանէն Լիճք, լրտեսին մօտ միջնորդ կը զրկէ պատուելի խաչատուր Քէրէմեանը: Պուտաբեան ասոր եւս ձերբակալել կու տայ: Տեղի կ'ունենան համատարած խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ: Կը խուզարկուի Գ. Արխանեանի բնակարանը: Կը ձերբակալուին 18 անձեր: Կաշառքի միջոցով ձերբակալուածները ազատ կ'արձակուին:

Մթնոլորտը տակաւին չհանգստացած, Հոկտեմբերին Սարգիս Նախուրեան ահաբեկչութեան կ'ենթարկէ Կօմէր Փեհլիւան անունով լրտեսը: Մթնոլորտը դարձեալ կը շիկանայ: Կը ձերբակալուին 12 հոգի, որոնցմէ Նշան Կէնճեան կը խոստովանի թէ լեղափոխականներուն մեծը Գ. Արխանեանն է: (6)

Ձերբակալուելու կու գան նաեւ Գ. Արխանեանը, որ ճարպկօրէն փախուստ կու տայ: Մինչ այդ, Ղուկաս Ճանիկեան (Ճանիկ կամ Ճինիկօ) ահաբեկչութեան ենթարկած էր մատնիչը Պետրոս Պուտաբեանը (մատնիչը վիրաւորուած էր բազուկէն) եւ լեռ ապաստանած: Անոր միացած էին երկու փախստական հնչակեաններ՝ Մկրտիչ Թիւթիւնճեան եւ Արիստակէս Ճէնազեան: Գ. Արխանեան, իր երկու զինակիցներուն՝ պատուելի Նշան Քէշիշեանի եւ Զաքէ Գլըճեանի հետ կը միանայ անոնց. կը կազմուի «Մնձուրի Առիւծ»-ին (Արխանեանին տրուած ծածկանուններէն մին) յայտնի ֆետայական խումբը:

Գ. Արխանեանը հալածելու եւ ձերբակալելու համար, Արմտան կու գայ բանակային զօրախումբ մը: Կը սկսի խուզարկութիւններու, ձերբակալութիւններու, ալան-թալանի եւ բռնարարքներու երկար շարք մը: Ձերբակալուածները կ'ենթարկուին անյուր տանջանքներու: Մանր շարժարանքներու կ'ենթարկուին յատկապէս Արխանեանի ընտանիքի անդամները: Երբ անձեր կը մահանան չարչարանքներու տակ: Դաժան մահ մը կ'ունենայ Մկրտիչ Ղարամըկըրեանը: Ինքնամիտի եւ լուսկեաց այս երիտասարդը, բոլորին կասկածէն հեռու, խորքին մէջ կուսակցութեան լրատարն էր: Երբ Գ. Արխանեան լեռ կը բարձրանայ, Ղարա Մըկըր կ'ըլլայ խումբին կապն ու պաշար հասցնողը: Գիշեր մը, երբ խումբին պաշար հասցնելէն ետք աննկատ կը մտնէ պաշարուած գիւղը կը նկատուի լրտես Մատթէոս Ալէքսանեանի հարսին կողմէ: Մատթէոս երբ կը լսէ այս պատմութիւնը, անմիջապէս կը տեղեկացնէ զօրագունդի հրամանատարին: Մըկըրի չարչարանքը կը տեւէ 2 օր՝ անընդհատ: Ան կը նահատակուի առանց Արխանեանի խումբին տեղը խոստովանելու:

Ձերբակալութենէ կը խուսափի նաեւ Սարգիս Նախուրեանը: Ան կ'անցնի Տեվրիկ եւ ահաբեկչութեան կ'ենթարկէ լրտես Կարապետ Հայրանեանը (որ միայն կը վիրաւորուի): Ապա, անցնելով Կիրաստն, կը սպաննէ այլ լրտես մը: Կը մեկնի Զիմառա, որպէսզի նոյն ճակատագրին ենթարկէ Գարան անունով յայտնի լրտեսուհին: Տեվրիկի հնչակեան վարչութեան կողմէ տրուած այս առաքելութեան իրեն կ'ընկերանայ Ժիրայրի (Մարտիրոս Պոչաճեան) աշակերտներէն Նաթան Մէնէնտեանը: Գիշերով երկու ընկերները կը մտնեն ենթակային տունը եւ մուտքին մէջ Նաթան իր հասցուցած դաշոյնի հարուածներուն ժամանակ, սխալմամբ ծանրօրէն կը վիրաւորէ Սարգիսի թեւը: Ընկերները փախուստ կու տան, բայց Սարգիս արիւնհոսութեան պատճառով ուժասպառ կ'ըլլայ ու կը խնդրէ Նաթանէն առանձինն շարունակել փախուստը: Նաթան չուզէր ընկերոջ լքել:

Առաւօտեան, երկու ընկերներուն արեան հետքերով անոնց կը մօտենան խումբ մը մարդիք, որոնց մէջ լրտես Մկրտիչ Մարթեան կը ձեւացնէ թէ իրենք օգնութեան հասնող հայեր են: Երկու ընկերները կը ձերբակալուին: Սարգիս արիւնքամ կը մահանայ Տերսիմի բանտին մէջ: Իսկ Նաթան, կարճ դատավարութենէ մը ետք մահուան կը դատապարտուի եւ կախաղան մը վրայ Սեբաստիոյ մէջ:

Դէպքերու այս ընթացքին գուգահեռ, Արխանեանի խումբը կը շարունակէ իր գործունէութիւնը: Սանդուխ լեռան վրայ ան կը վերացնէ Մէհմէտ անունով թուրք լրտեսը: Զաթլը Զայ կոչուած գետակին մօտ, խումբը կը պաշարուի ոստիկանական ջոկատի մը կողմէ:

Յաջող մարտէ մը ետք, խումբը անվնաս կը նահանջէ դէպի աւելի ապահով բարձունքներ: 1892 Յունիսին, Ապուշտա բերդին մօտ ձեռք կ'անցնեն յարգի որս մը՝ լրտես Սերովը Քէօսէեանը: Վճիռը անխուսափելի էր: Յուլիսին խումբը կը պաշարուի կանոնաւոր զօրքի եւ պաշարուի կանոնաւոր զօրքի եւ տեւէ շուրջ 10 ժամ. հակառակորդի կողմէն կ'իյնան շատեր. Արխանեան կ'որոշէ նահանջել Սամա-Սայ: Ընդհանուր նահանջին, իր անյարմար դիրքին պատճառով Մկրտիչ կը յամենայ ու կը ձերբակալուի: Կ'ենթարկուի ծանր չարչարանքներու եւ ապա 10 տարուան բանտարկութեան: Իր նոր եւ աւելի յարմար դիրքերէն խումբը կրակէ տարափի տակ կ'առնէ իր ետեւէն յառաջացող ջոկատը, որ կը ստիպուի նահանջել: Իր այս պարտութիւնը ծանկելու համար, ջոկատի հրամանատարը, շրջաններ յղած իր հեռագիրներուն մէջ հայ ֆետայիներուն թիւը կը գւահատէ 36 հոգի: (7)

Շրջակայ ոստիկանատուններէն եւ զօրանոցներէն զինուորական նոր ուժեր կը հասնին օգնութեան: Հոն կը փութան նաեւ քիւրտ աւագակապետեր Ղեմծն, Ազիզը, Պօշնազը եւ Գուրաօղլուն: Ֆետայիներու խումբը, այս բոլորէն աննկատ,

ՍԵՒԱՆ ՆԱԳԳԱՇԵԱՆԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԸ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Վաչէ Յովսէփեան սրահին մէջ, Ուրբաթ, 2 Մարտ 2012 ժամը 8-ին, նկարչական ցուցահանդէսը տեղի ունեցաւ քաղաքիս երիտասարդ նկարչուհի Սեւան Նագգաշեանի, իր 32 գործերով, շարունակուելու համար Մարտ 3-ին եւ 4-ին:

Ներկայ էր ընտրանի արուեստագէտներու եւ արուեստասէրներու խումբ մը, որ հիացմունքով հետեւեցաւ իւրաքանչիւր նկարի աշխատանքին, գոյնին, ձեւաւորումին, խօսքին, պատգամին, թուիչք տալով նաեւ իր երեւակալութեան:

Սեւան մեծ մասամբ կ'աշխատի իւղաներկով, eau-forte, եւ խառն (mixed media) թեքնիքներով:

Արդարեւ, 1995 թ.-ին Երեւանի Գեղարուեստից Ակադեմիայի շրջանաւարտ Սեւանի համար դարձար գոյութիւն չունի. ամէն օր ստրվելիք ունի. վկայ՝ իր խմբական թէ անհատական աւելի քան 45 ցուցահանդէսները Մոնթրէալի, Նիւ Եորքի, Պոստոնի, Փրովիտորնսի, Ֆրանսայի, Հոլլանդայի, Լոնդոնի մէջ: Մոնթրէալի Arts Club Annual Juried Art Show-ի երկու յաջորդական տարիներուն, 2004 եւ 2005 թուականներուն արժանացաւ առաջին մրցանակի, իսկ 2007-ին՝ Best Painter of the Year Award-ին:

Սեւանը ըլլալով Visual Artist/ Animator, աշխատակցած է բազմաթիւ ֆիլմերու պատրաստութեան գործին, ինչպիսին են Ռուբեն Հալիֆերդեանի "Չատիկ", Ռոբերտ Սահակեանցի "Pinocchio", Սիլվեյն Շո-

մէի Oscar-ի նշումի արժանացած "La vieille dame et les pigeons" եւ "Les tripllettes de Belleville", ինչպէս նաեւ Եղիշէ Չարենցի եւ Հայաստանի մասին վաւերագրական ֆիլմերու վրայ: Իսկ վերջերս, 2011-ին, Reanimania International Animation Film Festival-ին մասնակցած է որպէս լիամետրաժ ֆիլմերու ժիւրիի անդամ:

Չեց տեղում գրախանութի դարակից մի քանի գիրք առանձնացրի եւ առաջարկեցի կարդալ ու առաջարկել ընթերցողին: Հասկանալի է, որ գրական նման բազմազանություն մէջ դժուար չէ մոլորուելը: Եւ վատն այն է, որ ոչինչ չի արուած ընթերցողին կողմնորոշելու, լաւ գիրքը գովազդելու համար: Միւս կողմից էլ նորաձեւութեան է վերածուել առանց կարդալու դժգոհելը կամ կարծիք յայտնելը:

- Իսկ ինչո՞վ է այսօր գրադուած վառելիք Ա լեքսանեանը:

Վ.Ա. - Վառլեն Ա լեքսանեանը ժամանակաւորապէս դադարել է բանաստեղծութիւն գրել: Պատճառը «Վիպական ժամանակների կնճիւր» պայմանական վերնագրով վէպն է, որը մտադիր եմ աւարտել գոնէ եկող տարուայ Յունուարին:

Առանձին հատուածներ տպագրուել են գրական մամուլում եւ, դա տելով արձագանքներից, գուր չեմ տքնում: Կարող է տարօրինակ թուալ այս յանկարծակի անցումը արձակի, բայց ամէն ինչ տրամաբանական է, քանի որ արձակի նիւթն էլ վերցնում եմ նոյն ակունքից, որտեղից իմ բանաստեղծութիւններին էլ վերցնում:

Պարզապէս անհրաժեշտութիւն զգացուեց ասելիքս աւելի առարկայական ներկայացնել, քանի որ զգայականն արդէն կար բանաստեղծութեան մէջ:

Առաջիկայում «Նորք» հանդէսում կը տպագրուի անցեալի պատմութեան վերաբերեալ իմ ծաւալուն յօդուածը, որի պահանջը, կարծում եմ, հասունացել էր:

Չմանրամասնելով ասեմ, որ թեման բանավիճակն է: Իսկ թէ որքանով եմ կարողացել օբիեկտիւօրէն մօտենալ խնդրին, կ'ասի ընթերցողը:

- Յայտնի է, որ այս տարի Երեւանը հռչակուել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Ինչպէ՞ս էք Ձեզ զգում որպէս համաշխարհային մայրաքաղաք: Եթէ որեւէ երգչի ընդունէինք, ապա ամբողջ քաղաքով ցրուած կը լինէին նրա համերգի գովազդները, չհաշուած տարբեր հեռուստատարիքներն ու ռատիոները: Մինչդեռ փորձեք Երեւանում թէկուզ անշան մի յիշատակում գտնել, որ այս օրերին

Վ.Ա. - Երեւանի փողոցներում ոչինչ չի յուշում, որ մեր քաղաքը գրքի հետ կապ ունի, առաւել եւս, որ ներկայանում է որպէս գրքի համաշխարհային մայրաքաղաք: Եթէ որեւէ երգչի ընդունէինք, ապա ամբողջ քաղաքով ցրուած կը լինէին նրա համերգի գովազդները, չհաշուած տարբեր հեռուստատարիքներն ու ռատիոները: Մինչդեռ փորձեք Երեւանում թէկուզ անշան մի յիշատակում գտնել, որ այս օրերին

Շար.ը էջ 15

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ԵՒ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՅՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՆԴՄԱՐԳԱՐԵԱՆ

Որեւէ ազգի լեզուն կը նմանի մեծ լիճի մը, որ յարատեւ փոփոխութեան մէջ է: Կ'ազդուի՝ թէ՛ իր յատակէն բխող աղբիւրներէն, թէ՛ իր մէջ հոսող գետերէն:

Լեզուներու հոլովոյթը ենթակայ է՝ տիրող քաղաքական, տնտեսական, կրօնական, մշակութային ազդակներու:

Չկայ լեզու մը, որ ազդեցութիւն կրած չըլլայ իր անմիջական կամ հեռուոր շրջանակներէն:

Ինչ որ ըլլան դուրսի ազդակները, լեզուի մը մէջ բառեր ներառնելու պարտականութիւնը կ'իյնայ զայն գործածողներուն՝ գրողներուն, տնտեսական, արուեստի, արհեստագիտութեան մարզէ ըլլալ գործողներուն, ժողովրդական հաւաքին եւ յատկապէս պետութեան վրայ:

Հայաստանի մէջ, մեր բառապաշարը հակադաս փոփոխութիւններու ենթարկուեցաւ Սովետական շրջանէն սկսեալ մինչեւ այս օրերը:

Փոփոխութիւններու մէկ մասը ուրախութիւն եւ հպարտութիւն առթող երեւոյթ կը պարզէ՝ հոյակապ նոր բառակերտումներ: Ողջունելի են մանաւանդ բառակազմութեան օրէնքներով կազմուած փոփոխութիւնները:

Բազմաթիւ նոր բառեր, որոնք մեր լեզուն հարստացուցին եւ դարուն դրոշմը դրին մեր լեզուի զարգացման վրայ: Նորակերտ այս բառերը դեռ չեն մտած մեր բառարաններուն մէջ, աշխատանք մը, որ կը յուսանք օր մը պիտի կատարուի:

Այդ գեղեցիկ նորակերտ բառերու կողքին սակայն, եկան աւերակներ, որոնք փութկոտութեան, ծուլութեան, դիւրութեան, կապկելու, սին զարգացման հետեւանք են:

Ի՞նչ է այս սիրահարութիւնը

օտար բառերու ներառնման նկատմամբ: Ինչո՞ւ ճիգ չենք ընել կերտելու ՄԵ՛ՐԸ: Մեր լեզուն այնքան ձկուն է, որ ա մէն կարելիութիւն կ'ընձեռնէ ստեղծելու մե՛րը: Խորենացին երբ կ'ակնարկէ եւամեծ Սուրբին՝ Մեսրոպի գիրերու գիւտի մասին, կ'ըսէ «Ինչո՞ւ, մենք օտարներէ՞ն պիտի մուրայինք մեր տառերը»: Յատկանշական է Խորենացու գործածած «մուրալ» բառը, որ Հայ ազգի հպարտութեան արժանիքը կ'արտայայտէ:

Մեր ժողովուրդի մէջ, դուրսի ազդեցութիւնները մեծ մասամբ Արաբերէնէն թրքերէնի անցած եւ մեր խօսակցական լեզուին մէջ ներխուժած բառեր են, ասոնց վրայ եկաւ աւելնալու Ռուսերէնի ազդեցութիւնը

-Իսկ այսօր, անգլերէնի եւ լատիներէնի ազդեցութիւնն է, որ քառասմբակ՝ մեր թերթերու, պարբերական թերթերու, հեռատեսիլի, ազդերու մէջ կը վխտայ... շօու, ոխսք, սերեալ, օրգանիզմ, կոլեգիա, դիագնոզ, էներգի, մնացեալը դուք շարեցէք... Ասիկա քաղաքակրթուած մուրալ չէ՞:

Յո՞ւ երթաս, Հայերէն:

Մեր նախահայրերը աւելի քան երկու հազար տարի առաջ, երբ աշխարհի ամենէն զօրաւոր մշակոյթը յունականն էր, չորդեգրեցին՝ քօմետիա եւ տրագիդիա որակումները, գործածեցին մե՛րը՝ «կատակերգութիւն» եւ «ողբերգութիւն»: Խորագոյն յարգանք մեր նախնեաց...: Իսկ մենք ի՞նչ ըրինք: Առաջին պատեհ առիթով, սիւսէ, ռեժիսոր...


Սփիւռքահայը Հայաստանին կը նայի որպէս լեզուի բիւրեղացման հնոց: Հայաստանի լեզուի պատկերը

Շար.ը էջ 15

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝
ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924
vamedia@yahoo.com

ՍՓԻՌՔԱՅԱՅ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ԼՈՆՏՈՆ ԿՈՒ ԳԱՅ

Երեւանի Գաբրիէլ Սունդուկեանի անուան ազգային ակադեմիական թատրոնը յառաջիկայ Մայիս 16ին եւ 17ին, 2012, հիւրախաղերով հանդէս պիտի գայ Լոնտոնի Կլոպ թատերասրահին մէջ: Արդարեւ Սունդուկեանի դերասանները՝ հայերէն լեզուով պիտի բեմադրեն Շէյքսպիրի «Քինկ ձոն» թատերախաղը:

ԼԻԲԱՆԱՆ

ՀԱՅ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՐԳԵՒՏՐՈՒԻՆ

Վերջերս Պէյրութի «Նոսթ Արք» ցուցասրահին մէջ տեղի ունեցած ընդունելութեան մը ընթացքին պարզեատրուած են լիբանանահայ մամուլի կարգ մը խմբագիրներն ու լրագրողները: Առ ի գնահատանք իրենց նուիրումին անոնք ստացած են էդիկ Բերթեանի գործերէն իբրեւ նուէր:

Այս առթիւ խօսք առած է Լիբանանի Հայաստանի դեսպանատան Ա. քարտուղար Վարդան Ադամեան, որ այս առթիւ կարգացած է դեսպան Աշոտ Քոչարեանի ուղերձը, բարձր գնահատելով հայապահպանման մէջ հայ լրագրողի վիճակուած դերը, խօսք առած են նաեւ Թորոս Թորանեան եւ Վարուժան Արք. Հերկելեան:

Պարզեատրուած անձերուն մէկ կը գտնուին Տիգրան ձինպաշեան, Արամ Սէփէթեան, Ժիրայր Նայիրի, Պէպօ Սիմոնեան, Ահարոն Շիրտմեան, Ժիրայր Դանիէլեան, Պարոյր Աղպաշեան, Համբիկ Մարտիրոսեան, Մեթր Գասպար Տէրտէրեան, Յակոբ Բագրատունի, Շահանդուխտ, Եղիա Գայեանեան, Զաւէն Մարրիւսեան եւ ուրիշներ:

ԳԵՐՄԱՆԻԱ

ԱՐԹՈՒՐ ԱԲՐԱՅԱՄԻ ՄՐՅՈՒՄԸ ՄԱՐՏ 31ԻՆ

Աշխարհի նախկին ախոյեան եւ Գերմանիոյ ներկայացուցիչ հայ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի յաջորդ մենամարտը տեղի պիտի ունենայ Մարտ 31ին, Գերմանիոյ Քիլ քաղաքի «Sparkassen-Arena» մարզադաշտին մէջ: Արթուր Աբրահամի մրցակիցն է նախկին ախոյեան, 33 տարեկան լեհ Պիոզր Վերլշիւքսին:

Այս պակասութեամբ Արթուր Աբրահամը յայտարարած է. «Մարտական տրամադրութիւն ունիմ, ինչպէս միշտ: Հերթական գիծով պիտի երթամ յաղթելու: Մինչ այդ կը շարունակեմ իմ ամէնօրեայ մարզումներս»:

ԹՈՒՐԷՒԱ

ՆԵՐՈՒԶԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻ ՎԵՐԱԾՈՒԵՑԱՒ ՎՆԱՍՏՈՒԱԾ Է ՀԱՅՈՑ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Քիւրտերու կողմէ Ներուզի տօնակատարութեան ժամանակ Պոլսոյ եւ Տիարպէքիի մէջ ոստիկանութիւնը միջամտութիւններ կատարելով գոյգ քաղաքներու կարգ մը հրապարակները պատերազմի դաշտերու վերածուած էին: Իսթանպուլի եւ Տիարպէքիի քաղաքապետները նախապէս արգիլած էին Ներուզի տօնակատարութեան նշումը: Սակայն «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» կուսակցութիւնը (BDP) ժողովուրդին կոչ ուղղած էր հաւաքուիլ եւ նշել աւանդական տօնը:

Այս գարգացումներու լոյսին տակ ցուցարանները մօտաւորապէս 500 հոգինոց խումբով, ներխուժած են Նաուլլ Գաբուի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ շրջափակին ներս: Քարկոծած են եկեղեցւոյ ճակտին ծածանող թրքական դրօշակը եւ խորտակած են եկեղեցւոյ սպակիները:

ԿԱՐԴԱՑՈՂՆ Է ԾԻՇՏԳՆԱՅԱՏՈՒՄ

Շարունակուած էջ 14-էն

ապրում ենք գրքի համաշխարհային մայրաքաղաքում: Զէք գտնի, որովհետեւ չկայ: Չեմ կասկածում, որ այդ առիթով դեռ միջոցառումներ կը լինեն, գրքի մի քանի թուղթիկ ցուցահանդէսներ էլ կը բացուեն, սովորականի պէս միջոցառումները կ'եզրափակուեն ամէն առիթով հանդէս եկող նոյն երգիչներին համերգով եւ սակայն այդ ամէնը չի վերածուի հոգեւոր անհրաժեշտութեան եւ անհրաժեշտ բովանդակութիւնը չի ունենայ, որովհետեւ կը լինի գրքի մասին, այլ ոչ գրքի համար:

Այս է այսօրուայ մեր իրական վերաբերմունքը գրքին, վերաբերմունք, որ կարելի է բնութագրել որպէս երկրորդային կամ միջոցառումային:

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ ԵՒ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 14-էն

այսօր հեռատեսիլը կը ներկայացնէ, Հ1-ը, որ պետական հովանաւորութիւն եւ հսկողութիւն կը վայելէ: Հետաքրքիր ծրագիրներ կը ներկայացուին հեռատեսիլին: Անոնց կողքին, սակայն, արանքներէն կը սպրդին օտարամուտ բառերու ոհմակները:

սելու պահանջը, երբ Հայաստանի պաշտօնական հեռատեսիլը արդէն որդեգրած է օտար բառերը:

Եթէ չկան այդ բառերուն համազօրները, ստեղծենք: Չկայ բառ մը, որուն համազօրը կարելի չըլլայ կերտել:

Ժամանակն է «հայերէնը»՝ ՀԱՅՆԻՒՆԻ վերածելու լուրջ գործին անցնիլը:

Ներկայի մեր պայմաններուն մէջ, ազգային գոյատեւումը ապահովելու, մեր ողնաշարը զօրացնելու միակ ճանապարհը կորնայցու պատգամին հետեւիլն է...

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՄԼԵԱՆ ԹԱԹԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ՝ Ի ԽՆԴԻՐ ԱՒԵԼԻ ԼԱՒ ԱՊԱԳԱՅԻ ՄԸ

Նոր Մարաշի՝ Լիբանանի հայաստ մէկ անկիւնին մէջ 1934ին ծնունդ առած այս կրթական շարժումը մէկ մասնիկն է Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան առաքելութեան, եւ անոր տեսլականով յառաջ կը տանի մանկավարժական գործունէութիւն: Անոր նպատակը երբեակ եզրեր ունի- որակաւոր, հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութեամբ իրեն վստահուած հայ տղոց աւելի լաւ ապագայի մը առիթներ բանալ:

Բազմաթիւ արժանաւոր հայրերին, հոգեւոր եւ կրթական մշակներ կերտած են Շամլեան Թաթիկեանի պատմութիւնը: Իր 78 տարիներուն ընթացքին վարժարանը ծառայած է շրջանի հայութեան ամենակարիքաւոր խաւերուն, իր վրայ առնելով ընկերային եւ նիւթական մեծ յանձնառութիւններ, նոյն ատեն ապրելով լիբանանեան քաղաքացիական պատերազմի ծանր օրերն ու կրելով այդ օրերուն հետեւանքները:

Վարժարանի շրջանաւարտներուն մեծամասնութիւնը, Լիբանանի մէջ թէ՛ այլուր, իրենց կենցաղով, դիրքերով եւ կերտած կեանքով լաւագոյնս կը վկայեն անոր առաքելութեան անհրաժեշտութիւնը, եւ արդարացուցած են անոր գոյութիւնը:


Պատերազմի օրերէն ետք, դպրոցը շարունակեց երթարկուիլ գանազան ցնցումներու: Փակուելու վտանգէն ան ազատուեցաւ շնորհիւ իմաստուն եւ կտրուկ որոշումներու: Հազիւ ինքզինք գտնելու վրայ՝ Լիբանանի յաջորդական կառավարութիւնները պարտադրեցին ուսուցչական հատուցումներու յաւելումներ, որոնց վրայ քանիցս աւելցան սղաճին հետ կապուած յաւելումներ: Այս բոլորը բարդուեցան արդէն լրիւ կրթաթոշակ վճարելու անկարող ընտանիքներու յառաջացուցած բացին վրայ, եւ այսօր դպրոցը հազիւ թէ ոտքի կը մնայ, եւ այդ ալ շնորհիւ անհատ թէ՛ միութեանական բարերարներու: Եւ, հակառակ անձուկ պայմաններու, Աստուծոյ շնորհքով Շամլեան Թաթիկեանը տակաւին կը շարունակէ մեր տղոց եւ աղջիկներուն դիմաց բանալ իրենց տաղանդները ի յայտ բերելու առիթներ՝ ըլլան անոնք ամենօրեայ պաշտամունքներու, մշակութային տոհմիկ միջնորդութիւն («Սիփան» պարախումբով) եւ միջ-դպրոցական այլազան միջոցառումներու մասնակցութեամբ:

Այսօր, Պուրճ Համուտէն եւ անոր շրջակայքէն նոր, մատղաշ հայրերներ կը վստահուին Շամլեան Թաթիկեանին, եւ դպրոցը աւելի քան երբեք պէ՛տք է շարունակէ իր առաքելութիւնը, ի տես մեր ընկերութեան արժէքներուն թաւալլոյր անկումին եւ հայապահպանման ջանքերուն կրկնապատկումին անհրաժեշտութեան: Ունինք 323 աշակերտներ, որոնք կու գան աւելի քան 200 ընտանիքներէ: Այս ընտանիքներէն ո՛չ մէկը կարող է կրթաթոշակը ամբողջութեամբ վճարել. տասնհինգ եւ աւելի ընտանիքներ ալ կան, որոնք նուազագոյն գումարն ալ տալու կարողութիւնը չունին, որքան ալ չնչին ըլլայ անոնց կացութեան յարմարեցուած կրթաթոշակը: Իսկ դպրոցը, գիտակից իր առաքելութեան լրջութեան, իրեն դիմող ո՛չ մէկ հայրորդի կը մերժէ:


Մեր տղոց եւ աղջիկներուն աւելի լաւ ապագայի մը առիթներ տալու համար, Շամլեան Թաթիկեանի շուրջ հա՛րկ է համախմբուիլ իրբեւ շրջանաւարտներ եւ բարեկամներ, ու կարելի ամէն միջոցներով օգնել, որ ան կարենայ իր ստանձնած պարտականութիւնը լաւագոյնս կատարել: Առ այդ՝ բոլորը հրաւիրուած էք ձեր ներկայութեամբ եւ նեցուկով արտայայտել ձեր գորակցութիւնը ձեր սիրելի վարժարանին: Յատուկ հաւաք ծրագրուած է Շաբաթ, Մարտ 31 երեկոյեան ժամը 7:30ին, Փասատինայի Raffi's Baquet ճաշարանին մէջ, 3887 E. Sierra Madre Blvd. : Տեղեր ապահովելու համար՝ կապ պահել Տիկ. Լիզա Ճիկերեան-Մանոյեանին (323/ 717 2842) կամ Տիկ. Սիրան Թոքաղլեան-Յարութիւնեանին (818/ 317 7327) հետ: Տոմսի գին՝ \$30:

Հայ Աւետարանական Շամլեան Թաթիկեան Երկրորդական Վարժարանի Տնօրէնուհի Օրդ. Վարդուհի Պալըքեան

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախառնակներու և մանուկներու Քայքայարարութիւնը բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզոյի և մկանային ցուցի:
Իրենաշարժի վթորի ետեւանքով պատասխան
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

massispost.com
daily news updates



ՔՆԱԲԵՐՆԵՐԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ ԵՆ ՍԱՀՈՒԱՆ ԿՏԱՆԳԸ

Բժիշկները կոչ են անում վերանայել քնաբեր դեղամիջոցների նկատմամբ մտեցումը՝ վերջերս կատարուած մի լայնածաւալ ուսումնասիրութեամբ պարզուել է, որ բժիշկները նշանակած քնաբերները կարող են կապ ունենալ ԱՄՆ-ում տարեկան կէս միլիոն մահացութիւնների հետ:

Անքնութեան դէմ սովորաբար օգտագործուող դեղահաբերը կամ քնաբերները, օրինակ՝ տեմազպամը կամ գոլպիդեմը, որոնք անքնութեան դէպքում նշանակուած են կարճ ժամկէտով, չորս անգամ մեծացնում են մահուան վտանգը, ասում է BMJ բաց ամսագրում հրատարակուած ուսումնասիրութեան մէջ:

Ուսումնասիրութիւնը կատարուել է ԱՄՆ-ում, որտեղ 2010-ին մեծահասակ բնակչութեան աւելի քան 10%-ը օգտագործել է քնաբեր դեղամիջոցներ: Ուսումնասիրութեան հեղինակները հաշուարկել են, որ հնարաւոր է, որ ԱՄՆ-ում այդ տարուայ լրացուցիչ մահացութեան 320.000-ից մինչև 507.000 դէպքերը կապ են ունեցել քնաբերների օգտագործման հետ:

Հետազոտողները՝ Լա պոլլաչի (Քալիֆորնիա) Սքրիփս Կլինիկայի քնի կենտրոնի բժիշկ Դանիէլ Կրիպկեի գլխաւորութեամբ, ուսումնասիրել են ԱՄՆ-ի ֆենսիլվանիա նահանգի բնակչութեանը, որին սպասարկում է ամենամեծ գիւղական ինտեգրուած առողջապահական համակարգը:

Երկուսուկէս տարուայ ընթացքում նրանք բժիշկներին նշանակած քնաբերները ընդունող 10.500 մարդկանց մէջ մահացութեան մակարդակը համեմատել են 23.600 այն մարդկանց հետ (միլենոյն տարիքի, առողջական վիճակի եւ այլ գործոններով), ովքեր չեն ընդունել այդ դեղամիջոցները: Ուսումնասիրողները միջին տարիքը եղել է 54:

Ուսումնասիրութեամբ գիտնականները պարզել են, որ նոյնիսկ նրանց համար, ովքեր օգտագործել են համեմատաբար քիչ քանակութեամբ քնաբեր հաբեր՝ տարեկան 18 չափաբաժնից քիչ, մահանալու վտանգը 3,5 անգամ գերազանցել է՝ համեմատած այն մարդկանց հետ, ովքեր ընդհանրապէս այդ հաբերը չեն օգտագործել: Այն մարդիկ, ում աւելի շատ քնաբեր է նշանակուել՝ տարեկան 18-ից մինչև 132 չափաբաժին, հաւանականութիւնը չորս անգամ աւելի շատ է եղել, որ ուսումնասիրութեան վերջում արդէն մահացած կը լինէին: Իսկ 132 կամ աւելի չափաբաժին ընդունողների մահանալու վտանգը հինգ անգամ աւելի է եղել՝ համեմատած այն մարդկանց հետ, ովքեր ընդհանրապէս քնաբեր չեն օգտագործել:

Նրանք, ովքեր ամենաշատ են քնաբերներ օգտագործել, 35%-ով աւելի հաւանական է եղել, որ հիւանդ են եղել քաղցկեղով, չնայած նրանք քաղցկեղով հիւանդների ռիսկային խմբում ընդգրկուած չեն եղել: Քաղցկեղով հիւանդանալու վտանգը աւելի մեծ է եղել, երբ օգտագործել են տեմազպամ (բենզոզոլիապինները շարքից): Քնաբերները եւ քաղցկեղի միջեւ կապը հաստատուել է նաեւ նախորդ ուսումնասիրութիւններում:

Նրանք, ովքեր ֆինանսական շահեր չունեն քնաբերներից, ասում

են, որ դրանց օգուտը խղճուկ է, եւ այսօր մի նոր մտեցում կայ, որ ճանաչողական-վարքագծային թերապիան աւելի լաւ է աշխատում խրոնիկական անքնութեան դէմ, քան քնաբեր հաբեր:

Բժիշկներն ասում են, որ քնաբերները կրճատում են կեանքը տարբեր եղանակներով: Նմանատիպ դեղամիջոցները աւելացնում են դեպրեսիան, որն էլ կարող է յանգեցնել ինքնասպանութեան: Դրանք ազդում են մեքենայ վարելու եւ ճանաչողական հմտութիւնների վրայ, որն էլ աւելի վտանգաւոր է դարձնում մեքենայ վարելը: Այս հաբերը կարող են քնի ժամանակ շնչարգելութեան պատճառ դառնալ, որը յանգեցնում է քնի խանգարման, եւ քնաբեր օգտագործողը սրտի խնդիրներ է ունենում: Ոմանք նոյնիսկ լուսնոտութեամբ են տառապում, որը կարող է շատ վտանգաւոր լինել, իսկ մի մասն էլ սկսում է գիշերով սնուել, որը յանգեցնում է գիրութեան:

Ուսումնասիրութեան ընթացքում քնաբերներ օգտագործողներին՝ ստամոքսի խնդիրներ եւ ստամոքսի խոց ունենալու հաւանականութիւնն աւելի մեծ է եղել: Նրանց մօտ, նոյնիսկ աւելի շատ, քան՝ ծխողների, ախտորոշուել է արեան, թոքերի, հաստ աղիքի եւ կամ շագանակազեղծի քաղցկեղ:

Մեծ Բրիտանիայի Առողջութեան եւ կլինիկական հմտութեան ազգային ինստիտուտը հաւանութիւն տուել է քնաբեր դեղամիջոցների կարճատեւ կէս օգտագործմանը: Ուսումնասիրութեան հեղինակները կարծում են, որ կը գայ ժամանակ, երբ կը վերանայուի այդ հաբերի նոյնիսկ սահմանափակ օգտագործման հարցը:

Երկրի Թագաւորական դեղագործական ընկերութեան աշխատակից Նինա Բարնթըր ասում է, որ դա «շատ կարեւոր ուսումնասիրութիւն է, չնայած անհար է արձատապէս փոխել մտեցումը կարճ ժամանակահատուածում. այն պէտք է բարձրացնի իրազեկութեան մակարդակը եւ եւս մէկ անգամ յիշեցնի եւ հիւանդներին, եւ բժիշկներին դրանց պտտեցիալ վտանգների մասին՝ անքնութեան ժամանակ որպէս հանգստացնող միջոց օգտագործելիս:

Նա նաեւ աւելացնում է, թէ ուսումնասիրութիւնը չի ապացուցում, որ մահացութիւնների պատճառն այդ դեղահաբերն են, եւ զգուշացնում է, որ նրանք, ովքեր օգտագործում են, չպէտք է դադարեցնեն՝ առանց իրենց բժիշկների կամ դեղագործների հետ խորհրդակցելու:

Մեծ Բրիտանիայի Դեղամիջոցները եւ առողջապահական արտադրանքը կարգաւորող գործակալութիւնը յայտարարում է, որ բոլոր դեղամիջոցների անվտանգութիւնը շարունակաբար վերահսկում է երկրի շուկայում:

Նաեւ նշում է. «Քնաբեր դեղերը պէտք է ընդունել միայն այն ժամանակ, երբ անքնութիւնը շատ ուժեղ է, անկարողունակ է դարձնում մարդուն կամ էլ վերջինիս ծայրահեղ վիճակի է հասցնում, եւ նոյնիսկ այս դէպքում քնաբերը նշանակուած է միմիայն կարճ ժամկէտով (երկուսից չորս շաբաթ)»:

Guardian.co.uk, Թարգմ.՝ ԼՈՒՍԻՆԷ ՅԱՐՈՒԹ-ՅԻԻՆԵԱՆԸ «Ազգ»

ԽՐԱՏՆԵՐ՝ ԶԱՆԴԱՐՑ ՔՈՒՆ ՍԸ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԶԱՄԱՐ

Կարգ մը մարդիկ դիւրութեամբ քունի կ'անցնին, նոյնիսկ եթէ իրենց շուրջ աղմկարար դէպքեր պատահին: Ուրիշներ կը տապալուին անկողինին մէջ եւ մեծ ջանք կը թափեն քնանալ փորձելով՝ ճամբորդելու համար երազներու աշխարհին մէջ, սակայն անօգուտ:

Ահաւասիկ դուն քու անկողինիդ մէջն ես եւ կ'երագես յոգնեցուցիչ օրէ մը ետք հանգիստ քուն մը քնանալ, սակայն մէկ ժամ կ'անցնի եւ տակաւին արթուն ես: Ամէն անգամ երբ փորձես աչքերդ փակել, քունը աւելի կը հեռանայ անոնցմէ: Այսպիսով, կը մտնես քունէն զրկուած ըլլալու դատարկ շրջանակին մէջ:

Գիտականօրէն կայուն կարծիք մըն է, թէ անհատի մը ջիղերը որքան արթուն վիճակի մէջ ըլլան, այնքան կը վարձարանայ անոր անքնութեան տոկոսը:

Յամառ փորձեր կատարել է եւ մեծ ջանք թափել է ետք թեթեւ քուն մը կ'օրօրէ քեզի արեւածագէն եւ լարուած ժամացոյցի զանգէն կարճ ժամանակ առաջ միայն եւ դուն ապա ստիպուած կ'ըլլաս ոտքի կանգնելու եւ գործի երթալու: Սակայն ի՞նչ վիճակով:

Քունը հիմնական անհրաժեշտութիւն կը համարուի մարմնի, ուղեղի եւ հոգիի առողջութիւնը պահպանելու համար: Անքնութենէ տառապող անձը ամբողջ օրուան ընթացքին կը ծփայ եւ անհանգիստ վիճակի մը նշանները յստակօրէն ի յայտ կ'ըլլան անոր դէմքին վրայ:

Մասնագիտուհի Շելլա Լաֆրի, իր «Քունի Բուժիչ Ուժը» գիրքին մէջ, կը վստահեցնէ, թէ ճնշուած մթնոլորտի մէջ երկար ժամեր աշխատելու արթուն կը պահէ մարմնին ջիղերը եւ արգելք կը հանդիսանայ քունի եւ հանգստութեան: Մասնագիտուհին կ'աւելցնէ նաեւ, թէ տարբեր գործօններ իրենց կարգին պատճառ կ'ըլլան անքնութեան:

Մասնագէտները համաձայն կը գտնուին հանգիստ քուն մը ունենալու համար տրուած խրատներուն շուրջ: Այսպիսով, յաջորդ առաւօտուն աշխուժութեամբ կ'արթննա՝ գործի նոր օր մը սկսելու համար:

ՆՆՋԱՍԵՆԵԱԿԻՆ ԶԱՐԴԱՐԱՆՔԸ Շատ կարեւոր է որ ննջասենեակը հանգստաւէտ ըլլայ, իր գարդարանքով ընդհանրապէս եւ իր անկողինով մասնաւորապէս: Ճանցքուած իրողութիւն է, թէ գոյները կ'ազդեն անհատին հոգեկանին վրայ եւ դրական կամ վնասակարան ներգործութիւն կ'ունենան անոր տրամադրութեան վրայ: Ննջասենեակ-

կիդ պատերուն համար ընտրէ՝ ջերմ գոյներ եւ հագիր ջերմ գոյներով դիշերանոցներ:

ՄԿԱՆՆԵՐՈՒ ԹՈՒԼԱՅՈՒՄԸ Անհրաժեշտ է աչքերը գոցելէ առաջ, անկողինին մէջ, մկանները թուլցնել: Դի՛ր բարձր գլխուդ տակ եւ քիչ մը սթրեչինք ըրէ, այսինքն՝ կարելի եղածին չափ մարմնիդ մկանները երկարէ: Միաժամանակ մի քանի անգամ կամաց եւ խորունկ շունչ առ: ԽՈՒՍԱՓԻՐ ԺԱՄԱՅՈՅՑԻ ԶԱՐԿԵՐԷՆ

Քնանալու փորձ մը ըրած ժամանակ յարատեւօրէն ժամացոյցին նայելը կրնայ մտահոգութիւն պատճառել, որ իր կարգին կրնայ բարձրացնել անքնութեան աստիճանը: Մասնագէտ Նիլ Սթենլի կը գովազատէ ժամացոյցի սլաքները անընդհատ ստուգելէ եւ կը խրատէ զայն աչքէ հեռու տեղ մը դնել, որպէսզի ամէն վայրկեան գլուխինս ծուլով չնայինք:

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆԴ ԹՈՒՉՔ ՏՈՒՐ

Քունի չանցած եւ երազներու աշխարհին մէջ չսուզուած, երեւակայութեան դ թուրք տուր եւ բնութեան սքանչելի տեսարաններ երեւակայէ: Երեւակայութեան դ թեւերուն վրայ ճամբորդէ դէպի գեղեցիկ կղզի մը, որ ծագիկներով ու թիթեռնիկներով լեցուն է: Մասնագէտ Սթենլի կը հաստատէ, թէ այդպիսի տեսարաններ ջիղերը կը հանդարտեցնեն եւ դէպի քուն կ'առաջնորդեն:

ԱՆԿՈՂԻՆԷՆ ԴՈՒՐՍ ԵԿՈՒՐ

Մասնագէտ Սթենլի կ'ըսէ. «Քունը մի փնտուր, այլ ձգէ ինք գտնէ քեզի»: Ան կ'աւելցնէ, թէ անկողինին մէջ մնալը օգուտ չի բերեր, մասնաւոր թէ անքնութեան ժամանակ թեւակոխէ կէս ժամի սահմանները: Հետեւաբար, Սթենլի կը խրատէ դուրս գալ անկողինէն եւ նոյնիսկ ննջասենեակէն: Հեռատեսիլ դիտէ՛ կամ ինձոր մը կեր, կարեւորը՝ որ ուղեղդ բարդ հարցերով չզբաղցնես:

Հանգիստ քուն մը ունենալու եւ բարի երազներ վայելելու համար, նախընտրելի է քնանալէ երկու կամ երեք ժամ առաջ թեթեւ ընթրիք մը ընել, ապա մօտ կէս ժամ քալէ կամ շարժիլ:

Չերմ լոգանք մը առնելէ ետք, դիտէ՛ խնդրք պատճառող ֆիլմ մը կամ գուարճալի յայտագիր մը եւ կամ թեթեւ պատմութիւն մը կարդա՛: Լոյսերը մարելէ առաջ, վճռո՛ւ սեւ գաղափարները եւ գեղեցիկ յիշատակներու ժապաւէնը ի մտի բերելով վերջիլէ՛:

Ժպտա՛՛ ու ապա աչքերդ գոցէ՛:

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռածայնել՝
(626) 398-0506



ԳԱԼՈՒՍ ԱՐԽԱՆԵԱՆ (ՅԱԾԻ ՊԵՅ)

Շարունակում է 7-էն

կ'ապաստանի թուղուտ գիւղը, վատահելի ընկերներու մօտ:

Օգոստոսի մէջ, խումբը դարձեալ դէմ յանդիման կու գայ զինք հալածող մեծաթիւ գորքի մը: Կռիւէն խուսափելու միակ միջոցը, ցից եւ անանցանելի ժայռերէն կախուելով դէպի ձոր իջնելն էր: Այդպէս ալ կրնեն: Սակայն, արկածի մը հետեւանքով, ինքնաշէն ուղի մը կը պայթի եւ Գ. Արխանեան ու Ղուկաս ձիւնիկ ծանրորէն կը վիրաւորուին: Վիրաւորները կը տեղափոխեն մօտակայ գիւղ մը: Խումբը ժամանակաւորապէս կը ցրուի: Գ. Արխանեան ապաքինելէ ետք, իր հետ ունենալով պատուելի Նշան Քէշիշեանն ու Եծկէն Պաղտասարը, կը շարունակէ իր արկածալից թափառումները: Այս միջոցին, խումբին հուշակը կը մեծնայ, որովհետեւ շրջակայ թուրք եւ հայ գիւղացիները, Արմտան բանակած գորքի հրամանատարին մօտ վատահելի երեւնալու համար, ամէն ոք մատուցելու մը կը կատարէին, թէ իբր խումբը տեսած են այս ինչ լեռան վրայ... չմոռնալով խումբին թիւը մեծ չափերու հասցնել: Ու ամէն անգամ որ նման լուրի մը հիման վրայ բանակային գորագունը մը հետագօտուութեան կ'երթար, բնականաբար կը վերադառնար ձեռնունայն:

Ղուկաս եւս կ'ապաքինի եւ Արխատակէս ձէնագեանի հետ կը մեկնի Ակն: Տեղի Հնչակեան վարչութիւնը երկու կուռոզները կը դրկէ Տերսիմ, մասնակցելու համար քիւրտ ցեղապետ Գոշօղլու Ահմէտի պարզած ապստամբութեան:

Ղուկաս մեծ ներդրում կ'ունենայ ապստամբութեան մէջ եւ Տերսիմի քիւրտներուն մօտ հուշակ կը ստանայ որպէս քաջ կուռոզ: Չորս ամիս մասնակցելէ ետք ապստամբութեան, Ղուկաս կը վերադառնայ Արաբկիր ուր իրեն կը միանայ Տերսիմի ապստամբութեան մասնակից եւ փախստական Սահակ Ժամկոչեան ձանձիկ(:

Այդ ձմեռ Գ. Արխանեան կ'անցնէ Սեպուհ լեռան վրայ գտնուող Ս. Լուսաւորիչ վանքը, ուր կը գտնուէին իր վաղեմի զինակիցը՝ Ռուբէն Շիշմանեան (Տերսիմի Քեռի) եւ չլֆետայիներ: Վանքի հայրենասէր վանահայր Վարդան վրդ. Բրոխորեան, նախապէս եղած էր քահանայ եւ ունեցած աղջիկ գաւակ մը: Իր կնոջ մահէն ետք ան ընդունած էր կուսակրօնութիւնը: Քեռին եւ փոքր եղբայրը Խորէնը, վանահօր թոռնիկներն էին. իսկ վանքը վերածուած էր հայ ֆետայիներու թաքստոցին եւ հանդիպման վայրին:

Գարնանամուտին, Արխանեան կը վերադառնայ Արմտան ու իր մօտ կը հրաւիրէ փորձուած հայրուկներ Ն. Քէշիշեանը, Զաւէն, ձանձիկը, Գէորգ Վէլէեանը եւ Միքայէլ Տիւպէրեանը: Վերջին երկուքը, Պօղոս Էլպէկեանի հետ ոճրափորձի ենթարկած էին յայտնի լրտես հաճի Գէորգը ու կը մնային փախստական: Կը կազմուի նաեւ օժանդակ խումբ մը Միսաք Գլըճեանի գլխավորութեամբ:

Այդ միջոցին շրջան կու գայ Հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան Փոքր Հայքի Լիազոր գործիչ Արամ Աչքապաշեան, որ Մնձուրի եւ Երզնկայի կուռոզ ուժերը խորհրդակցութեան կը հրաւիրէ Ս. Լուսաւորիչ վանքը: Խորհրդակցութեան որպէս արդիւնք, կը կազմուին երկու խումբեր Գ. Ար-

խանեանի եւ Քեռիի խմբապետութեամբ: Արխանեանի խումբին մաս կը կազմեն ակնցի Սահակ Ժամկոչեան (տասնապետ), ակնցի Ղուկաս ձանձիկեան (երզնկացի), Խորէն Շիշմանեան (Քեռիի եղբայրը), արմտանցի Գէորգ Վէլէեան, արմտանցի Միքայէլ Տիւպէրեան եւ արմտանցի Զաքէ Գլըճեան: Արխանի խումբը պէտք է գործեր Մնձուրի շրջանին մէջ, իսկ Քեռիի խումբը Շապին Գարահիսարի շրջանին մէջ: (Ասոնցմէ գատ, Շապին Գարահիսարի շրջանին մէջ կը գործէր նաեւ Դանիէլ Զաւուշի խումբը):

Ա. Աչքապաշեան կը բացատրէ իւրաքանչիւր խումբին ընելիքները եւ կարգ մը այլ ծրագրային եւ գործնական հարցեր: (8) Սեպուհ լեռան անմատչելի ժայռերուն մէջ կը պատրաստեն զինապահեստ. կը կատարեն ռազմափորձեր:

Խումբերը, համաձայն իրենց տրուած ծրագրին, կը հեռանան վանքէն, ու կ'անցնին «գործի»:

Կարճ ժամանակ մը անց, Արխանեանի խումբը Արմտանի մէջ կը պաշարուի գերակայ գորքի մը կողմէ: Կռիւով կը կտրեն պաշարման օղակը եւ կ'ապաստանին մօտակայ Ս. Եղիա բլուրը: Փամփուշտներու տարափին տակ, անտրամաբանական կ'ըլլայ Գարապուտագ գետը անցնիլ փորձել. ուստի կ'ամրանան պիմրա քարայրին մէջ ու կ'որոշեն կուռիլ մինչեւ արեան վերջին կաթիլը: Խորէն, որ մինչ այդ վիրաւորուած էր ոտքէն, դէրք կը բռնէ քարայրէն դուրս ու կը մտնէ կուռի մէջ: Յաջորդ վերքը սակայն մահացու կ'ըլլայ: Խումբի մնացեալ անդամները փոխնիփոխ, քարայրի մուտքէն կը դիմադրեն գերակայ թշնամին: Կռիւը կը տեւէ երեք օր: Կը սպառէ հայրուկներուն պաշարն ու ջուրը: Կը վիրաւորուի նաեւ Ղուկասը: Փախուստի ոչ մէկ հնարաւորութիւն կար: Արխանեանի մայրը, կինը եւ Տ. Յակոբ քահանան կը միջամտեն որպէսզի յանձնուին: Արխանեան առաջին միջամտութիւնը կը մերժէ եւ կռիւը կը շարունակուի:

Բայց երկրորդ միջամտութեան, երբ կ'իմանայ թէ անմեղ գիւղացիները հալածանքներու կ'ենթարկուին՝ խումբը կը յանձնուի: Այդ տեղի կ'ունենայ 1893 Յունիս 26-ին: Գ. Արխանեանն ու ընկերները կը կալանաւորուին եւ Երզնկա կը տեղափոխուին արժանապատուօրէն: Գ. Արխանեանի խումբին մաս կազմելու, անոր օգնելու կամ անոր հետ կապ ունենալու համար կը ձերբակալուի շուրջ 50 անձ: Փաստօրէն, ձերբակալուածները Մնձուրի շրջանի հնչակեան մարտական-մտաւորական կորիզն էր: Դատավարութիւնը կը սկսի 1894 Ապրիլ 13-ին եւ կ'ըլլայ բացայայտօրէն կողմնակալ: Օրինակի համար, երբ ամբաստանեալները կը պահանջեն որ իրենց դէմ վկայութիւններ տուողները գան եւ դատարանին առջեւ տան իրենց վկայութիւնները, դատաւորը կը մերժէ, գտնելով որ. «Եթէ ձեր երեսին բերեմ, վախերնուն չպիտի վկայեն, գիտնալով որ ձեր դէմ վկայութիւն տուողը կոմիտէն կը սպաննէ»:(9) Վճիռը կը կայանայ 3 Դեկտեմբերին. 24 անձ կը դատապարտուի մահուան, 5 անձ ցկեանս բանտարկութեան եւ 22 անձ տարբեր տարիներու բանտարկութեան: Վճիռը դաժանօրէն խիստ էր. նկատի առնենք որ իր ամբողջ գործունէութեան ընթացքին Արխանեանի

խումբին մասնակիցներու թիւը 20-ը չէր անցած: Տեղի կ'ունենան արտաքին միջամտութիւններ եւ վճիռը կը մեղմանայ: Մահավճիռները կը վերածուին ցկեանս բանտարկութեան:

Բանտը, իրականութեան մէջ դժոխք մըն էր: Աղտոտութիւն, գարշահոտութիւն, հիւանդութիւններ, ոճրածին բանտարկեալներ, անվերջ կռիւներ՝ նոյնիսկ ոճիրներ բանտարկեալներուն միջեւ, մոլութիւններ, կաշառակեր պաշտօնեաներ եւայլն: Արխանեան եւ ընկերները, դուրսի ընկերներու օգնութեամբ, քանիցս կը փորձեն փախուստ կազմակերպել. կ'ըլլայ դէպք, երբ գետնի տակէն անցք բանալով, անոնք դուրս կու գան բանտի պարիսպէն դուրս. բայց միշտ ալ, վերջին պահուն կը մատնուին, կը ձերբակալուին ու վերստին բանտ բերուելով անոնց վիճակը աւելի կը ծանրանայ:

Գ. Արխանեան 12 տարի կը վայելէ թրջական բանտին արհաւիրքը: Երգիչը կ'երգէ.՝

Ազատութեան որդիք եմ, Արխանեան Գալուստ եմ, Երբ որ բանտէն ազատուեմ, Դարձեալ խուճիկ պիտ' կազմեմ:

Դժբախտաբար, կը սխալէր երգիչը: Արխանեան առիթ չունեցաւ նոր խումբեր կազմելու:

1905 Նոյեմբեր 18-ին, Գ. Արխանեան կը մահանայ բանտին մէջ, տարափոխիկ հիւանդութեան պատճառով: Իր փափաքով կը թաղուի Երզնկայի հայոց գերեզմանատան մէջ, իր զինակիցին, Տերսիմի Քեռիի գերեզմանին վրայ, որ իր մահէն առաջ, 1903 10 Յունիսին կախաղան հանուած էր Երզնկայի մէջ:

«Երզնկացիներս Ծնունդի եւ Զատիկի զիշերները սովորութիւն ունէինք եկեղեցիէն երթալ ուղղակի գերեզմանատուն, այցելելու մեռեալներուն, մոմեր վառելով անոնց գերեզմաններուն վրայ: Ծառախիտ ընդարձակ գերեզմանատունը լոյսներու մէջ կը շողար, իբր թէ հեթանոսական մեհեանի կրակի պաշտամունքն էր, որ տեղի կ'ունենար: Ամէն ոք իր ընտանիքին գերեզմանին այցելելէ ետք, կ'երթար մոմ մը կը վառէր Արխանեանի, Քեռիի եւ պոմպայի երեք նահատակներու շիրիմներուն վրայ: Գե-

րեզմանատունէն մեկնելէ ետք, հեռուէն կը տեսնէինք մոմի պլպլացող լոյսերը, ինչպէս եթէ աստեղ իջած ըլլային մասնաւորաբար նահատակներուն դամբարանին վրայ»:(10)

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

1. «Հնչակ», 1906 Յուն. - Փետր., Կորիւն, «Գալուստ Արխանեան»:
2. «Նոր Կեանք», 1898, Դեկտ. 1, Արփիար Արփիարեան, «Ժամանակակից Պատմութեան Էջեր-Հրոսակի մը Յիշատակներէն»:
3. Արխանեանի սերտ եւ հաւատարիմ զինակիցներէն պատուելի Նշան Քէշիշեան, բախտի բերումով, կ'ըլլայ Արխանեանի ֆետայական խումբէն միակը որ չի ձերբակալուի ու կ'անցնի արտասահման: Իր մահէն (1897) կարճ ժամանակ մը առաջ, ան գրի կ'առնէ Արխանեանին հետ իր ունեցած գործունէութիւնը: Ն. Քէշիշեանի մահէն ետք, Արփիար Արփիարեան այդ ձեռագիրը կը խմբագրէ եւ վերոնշեալ վերնագրին տակ, 12 շարունակականով կը հրատարակէ «Նոր Կեանք» ի 1898 Նոյ. 15-1899 Մայիս 15 թիւերուն մէջ: Այդ յօդու ծաշարքին մէջ, կարգ մը անուններու փոխարէն օգտագործուած են կեղծանուններ, որովհետեւ, ինչպէս կը գրէ Արփիարեան «յայտնի անուններէ ոմանց տեղ ծածկանուններ դնելով. չեմ գիտեր ո՞վ ողջ է ո՞վ մեռած. ո՞վ հայրենիք կը գտնուի ո՞վ բանտը»: Այս պարագային Գալուստ Արխանեան անուն փոխարէն օգտագործուած է Երուանդ Պէլլերեան:
3. Գարբիէլ Սալմանեան (Սալմուէլ), «Ազատագրութեան Նահակիրները», Պէրուս, 1960, թերթօն «Արարատ» թիւ 31, էջ 330-334:
4. «Նոր Կեանք», 1898, Դեկտ. 15:
5. Գ. Սալմանեան, ..., էջ 328:
6. Կ'Իրօշակ', 1895 Ապրիլ, «Արմտանի Խնդրոյն Տեղեկագիրը (նամակ Երզնկայից)»:
7. «Նոր Կեանք», 1899 Փետր. 15:
8. Արիկ Վարդանեան, «Մնձուրի Առիւծը», Պէրուս, 1960, թերթօն Կարապետի. (Ա. տպագրութիւն, Կ. Պոլիս, 1911) էջ 429-431:
9. «Իրօշակ» 1895, Յունիս:
10. Գարբիէլ Լազեան, «Դէմքեր Հայ Ազատագրական Շարժումէն», Գահիրէ, 1949, տպ. «Յուսաբեր», էջ 27:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ԶԱԽԱԿՍ ԵՒՇԴ ԶԵՒՈՎ ԶԻ ՅՆՉԵՐ

Ընտանիքի մը անդամները երջանկութեամբ կը լեցուին, երբ անոնց երեխան սկսի իր առաջին բառերը արտասանել, զիտնալով հանդերձ որ ան չափահասներուն գործածած բառերուն մօտ եւ նման երող բառեր կը հնարէ: Ամէն պարագայի, ծնողք կ'ուրախանան իրենց երեխային խօսակցութեան, որովհետեւ ան կը սկսի իր ուզածին մասին արտայայտել:

Խօսելու եւ հնչելու մասնագէտները դիտել կու տան, թէ բնական երեւոյթ մըն է, որ երեխան երեք տարեկանին այլակերպէ կարգ մը բառեր, սակայն եթէ անոր լեզուն ճիշդ ձեւով չզարգանայ՝ հարկ է դիմել մասնագէտ բժիշկներու, որովհետեւ այդ կրնայ ազդել դպրոցին եւ շրջանակին մէջ անոր ունեցած դերին վրայ:

Ճանչցուած իրողութիւն է, թէ երեխային մօտ լեզուի կառուցը կը յստականայ եւ աւողջ ձեւով կ'ամբողջանայ անոր երեքէն վեց տարեկանին միջեւ: Երբ պզտիկը նախակրթարանի Ա. կարգը մուտք գործէ, հարկ է որ ան բառերը ճիշդ ձեւով հնչէ եւ պարզ նախադասութիւններ կազմէ: Սակայն երեխաներուն մէջ 10-15 առ հարիւրի տոկոսով պարագաներ գոյութիւն ունին, որոնք կը տառապին լեզուի մէջ զարգանալու դժուարութենէն, հարց մը, որ պարտք կը համարուի ծնողքին՝ անհրաժեշտ քայլ երու դիմելու:

Երբ երեխան խօսելու սկսի, ան կը պարզացնէ բառերը եւ անոնց ձայնը կ'արտասանէ՝ ոչ տառերը: Այս մէկը ժամանակաւոր շրջան մըն է, որմէ կ'անցնի երեխան եւ անոր պատճառ կը դառնայ այն երեւոյթը, որ երեխային բերնի եւ շրթունքներու մկանները տակաւին իրենց ճիշդ տեղերը առած չեն ըլլար: Առաւել՝ այս հանգրուանին, երեխան դժուարութիւն կը գտնէ ճիշդ ձեւով նախադասութիւն կազմելու եւ կը փորձէ գայն պարզի վերածել, ինչպէս օրինակի համար երբ կ'ըսէ. «Ես բաղնիք երթամ»: Անօգուտ է անոր այս ձեւի նախադասութիւնները սրբազրել, որովհետեւ երեխան չի կրնար դժուար բառերը մէկ անգամով արտասանել այնքան ատեն որ մկանները տակաւին պատրաստ վիճակի մէջ չեն: Հարկ է միայն քաջալերել զինք՝ նախադասութիւնը վերակազմելու,

զիրերը կարգալու եւ թիւերը հաշուելու:

Բժշկական ուսումնասիրութիւնները ցուցաբերած են, թէ ջղային համակարգի խանգարումները կամ հոգեկան ու զգացական աճման, ինչպէս նաեւ լսողութեան դժուարութիւնները, պատասխանատու են երեխային ուշ լեզուելլելուն: Այն երեխաները, որոնք լսողութեան հարցերէ կը տառապին, չեն կրնար բառերը հասկնալ, եւ հետեւաբար, ապառոջ ձեւով կը հնչեն զանոնք:

Իսկ այն երեխաները, որոնք լեզուական զարգացման խանգարումներէ կը տառապին, չեն կրնար նախադասութիւն կազմել, ինչպէս նաեւ անոնց մօտ ի յայտ կու գայ հասկացողութեան խանգարումներ: Հարկ է շուտով յայտնաբերել այս հիւանդութիւնը եւ լուրջի առնել պարագան, սկսելով երեխային երեք տարեկան հասակէն, անոր օգնելու համար՝ յստակ ձեւով խօսելու, ինչ որ իրեն կ'արտօնէ համարձակօրէն շարունակ շրջանակին մէջ եւ խոսափել ապագային այս պատճառով դպրոցին մէջ յառաջացած ձախողութիւններէն:

Խօսելու վարժութիւնը կրնայ կատարուիլ միայն մասնագէտ բժիշկի հսկողութեան տակ: Հետեւաբար, հարկ է դիմել անոր եւ բացատրել երեխային տառապած լեզուական դժուարութիւններուն մասին, եւ արդարեւ, բժիշկը իր միջոցներով կը քննէ ու կը փնտռէ այս խնդիրին օրկանային պատճառը, ճշդելու համար երեխային հնչումի հարցը՝ որ ցոյց կու տայ անոր արտայայտելու եւ հասկնալու կարողութիւնը:

Բուժումը գլխաւորապէս կը կեդրոնանայ խաղալիքի ձեւով առարկաներու վրայ, նկատի առնելով խանգարումներուն որակն ու երեխային տարիքը եւ անհատականութիւնը, կ'աշխատի սրբազրել անոր լսողական համակարգը եւ տառերուն ու բառերուն հնչողութիւնը:

Պարզ խանգարումէ տառապող երեխան կը կարենայ ճիշդ ձեւով խօսիլ մօտաւորապէս երեքէն վեց ամսուան տեւողութեան ընթացքին: Մինչ աւելի մեծ բարդութիւններէ տառապող երեխային վարժութիւնները կրնան քանի մը տարիներ շարունակուիլ:

ԱՐԵՒԱՍՈՒՏԻ ԽՈՐԵՐ ԿԱՐԻՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Խաղաղ, անդորր արեւամոտ է՝ նրբանուրբ երանգներով... Երկնահաս հպարտ ժայռեր են ու ծաղկազարդ բացատ... Կարծես ծաղկէ գորգ լինի, այնպէս բնական է, ակնապարար. Շուրջս խոր, անհուն անդունդ է, եւ վիհեր են անյատակ, Քիչ այն կողմ ջրասակավ Արփան է հանդարտ հոսում, Յամատարած գեղեցկութիւն է՝ կատարելութեան հասնող, Ես մենակ չեմ... դու ինձ հետ

Ես քո իւրայատուկ էութեամբ... Դու ինձ հետ ես մտովի, ու ես շատ մօտիկ եմ զգում քեզ, Թովիչ աչքերիդ նայուածքը, կապոյտ աչքերիդ ծովէ հայեացքը. Ձգում եմ քնքուշ, առնական ձեռքերիդ աներեւոյթ հպումը, Քեզ զգում եմ ամէն ակնթարթի մէջ... ու խեղճօրէն երջանիկ եմ. Դու հեռու-հեռուս ես, ես մտովի քեզ հետ եմ, ու հոգիս քնդում է, Ես այլեւս մենակ չեմ ... դու ինձ հետ ես, ու ես ուժեղ եմ, հզօր:

ԻՐԻԿՆԱՍՈՒՏԻՆ ԿԱՐԻՆԷ ՄՈՎՍԻՍԵԱՆ

Ամէն ինչ մեղմ ու քնքուշ է իրիկնամուտին. Ծովի շոյող ծփանքի պէս է սերն իրկնամուտին: Իրիկնամուտին հոգին խաղաղ է, յուշերի ժամ է իրիկնամուտին: Յորիզոնը հրաշք է, գոյների

խաղ է իրկնամուտին, Աչքերդ արցունքոտ, բայց եւ պայծառ են իրկնամուտին, Յեռուները՝ մօտ, բայց եւ անժայր են, Քեզ հետ երազելն այնպէս քաղցր է իրկնամուտին...

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 8-էն

Եկեղեցիներ եւ հայ կեդրոններ՝ վառ պահելով հայ լեզուն, հաւատքը եւ մշակոյթը: Աւարտին բոլոր դերակատարները ուխտեցին մնալ տիպար հայեր՝ խոստանալով հայերէնը չմոռնալ:

Յայտագիրի վերջին բաժինով մաղթուեցաւ, որ Բարեկենդանի նախօրեակին գտնուելով՝ բարի կենդանութիւն եւ ուրախութիւն ըլլայ: Այդ առիթով հանդէս եկան Դ. դասարանի հեղաձկուն աղջիկները, որոնք ներկայացուցին հայկական պար մը՝ իրենց հայկական եռագոյն տարագներով, ներկաներուն աշխուժութիւնը հասցնելով գագաթնակետին: Իսկ Բ. դասարանէն խումբ մը աշակերտներ արտասանեցին Բարեկենդանի յատուկ արտասանութիւն մը:

Գնահատելի եւ շնորհաւորելի էր նախակրթարանի աշակերտներուն աշխատանքը: Անոնք մեծ խանդավառութեամբ հրամցուցին յայտագիրը: Ծնողները լաւ տպաւորութեամբ, հայկական ոգիով եւ սիրով լիցքաւորուած՝ ըմբռնեցին

ցին այս միջոցառումը եւ գոհունակ տրամադրութեամբ վերադարձան իրենց տուները:

Փակման խօսքը կատարեց վարժարանիս տնօրէն Յովսէփ Ինձեճիքեան, որ զնահատեց աշակերտները եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց յայտագիրը կազմակերպող Ս. Պատալեանին, հայերէնի դասատու Սիլվի Պաղտոյեանին եւ երաժշտութեան ուսուցիչներուն՝ Արտաշէս եւ Ժաննա Սինանեաններուն, որոնք անսակարկ նուիրումով մէջտեղ բերին ձեռնարկը:

Տնօրէնը Վ. Թէքէեանի բանաստեղծութենէն մէջբերում կատարելով՝ թելադրեց անչէջ պահել վարդանի անմահ յիշատակը, միշտ վառ պահելով հայու ոգին մեր սիրտերուն մէջ:

«Սահակ-Մեսրոպ» դպրոցը այն կրթօճախներէն է, որ կը ջանքէ հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութիւն՝ միշտ նկատի ունենալով դպրոցին վերելքին եւ ուսման բարգաւաճման կարեւորութիւնը, կերտելու համար տիպար հայրերին եւ ապագայի յաջող ղեկավարներ:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյլի 380-րդ կայանից

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ

Վշտակիր անդամներ
Ողբացեալ Անդրանիկ Սարեան ընտանիքի,
Լոս Անճելըս

ԿԱՄԱՐ գրականութեան եւ գեղարուեստի անկախ պարբերաթերթի խմբագրութիւնն սրտի խոր կակիծով իմացաւ Ձեր պատուական հօր ու բազում գրասէր ընթերցող հասարակութեան սիրելի հեղինակ եւ բազմավաստակ գրագէտ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆԻ շիջման գոյժը, որ պատահեցաւ իր խոր ալեւոյթին մէջ:

Ձեր հանգուցեալ հօր գրական վաստակը իր խորքով ու տարածքով՝ կու տայ աւելի քան եօթը տասնամեակներու սփիւռքահայ գրական կեանքին որոշ մէկ պատկերը, յատկապէս՝ 20-րդ դարու երեսնական տարիներու իրանա-հնդկահայ կեանքը պատկերող իր գրական բեղուն ստեղծագործութիւններով, որոնք արձանագրուած են սփիւռքահայ գրական մամուլի էջերուն,- Անի, Նալչիքի, Շիրակ, Կամար, Նոր Օր, Նոր Կեանք, Մասիս եւ այլ պարբերականներու եւ թերթերու մէջ: Ունի հրատարակուած աւելի քան տասնեակ մը հատորներ եւ նոյնքան անտիպ երկեր: Իր անդարձ կորուստը կը սզան մանաւանդ Շիրակ գրական ամսագիրի եւ Կամար պարբերաթերթի մեր շրջանակները, որոնց մնայուն աշխատակիցն էր ան:

Դար մը տեւողութեամբ իր երկրային կեանքէն, ան մեզի յիշատակ կը թողու նահապետական հայ մարդու իր փառաւոր կերպարը որ կը մնայ ջինջ ու պայծառ մեր յիշողութեան մէջ: Իր մահուան թուականով, պարգապէս ան կը թակէ յաւերժութեան դուռը, միանալու համար արեւելահայ իր նախորդներու յիշարժան փաղանքին:

Լոյս եւ խաղաղութիւն իր հոգիին: Օտար հողին ծանրութիւնը թող չճնշէ տարագիր Հայու իր յոգնաբեկ անշունչ մարմինին, ալ ըլլայ թեթեւ ու բարի:

Խորագրած վշտակցութեամբ՝
Խմբագրութիւն ԿԱՄԱՐ
Գրականութեան եւ Գեղարուեստի անկախ Պարբերաթերթի
խմբագիր՝ Ժիրայր Դանիէլեան,
խմբագրակազմի անդամներ՝ Երուանդ Ազատեան, Պարոյր Աղպաշեան, Համբէրկ Մարտիրոսեան, Ջաւէն Մսէրլեան, Արամ Սեփեթեան եւ Պէպօ Սիմոնեան

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ

ՌԻՄԱ ԱԲԷԴԻ-ՍԱՂԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմն ու պաշտօնէութիւնը իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն, զաւակին, ընտանեկան պարագաներուն ու համայն հարազատներուն:

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ

ՌԻՄԱ ԱԲԷԴԻ-ՍԱՂԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնանց Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ պարագաներուն՝ յատկապէս Սաղբեան ընտանիքին:
Առ այդ, փոխան ծաղկեպսակի, \$100 տուար կը նուիրէ «Մասիս»ին:

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ

ԱՐՈՒՍԵԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ատրիան Սաղբեան իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ամուսնոյն, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:
Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ

Շարունակուած էջ 13-էն

Գարակէօգեանի մօտ,
Եւ երկրորդ, վճարումները մաս առ մաս պիտի կատարուէին երեք յարանուանութեանց ներկայացուցիչներէն կազմուած հասարակաց գրասենեակի ստացագիրներու հիման վրայ:

Վեհափառ Հայրապետը փակեց ժողովը սրտառուչ կոչ մը ուղղելով ներկաներուն եւ յայտնելով իր ակնատեսի վկայութիւնը Ս. Յարութեան Տաճարէն ներս կատարուելիք «վերաշինութեան հսկայական գործին, ղեկավարութեանը ներքեւ իրաւատէր երեք ազգերուն, որոնց մասնագէտ ճարտարապետները իմաստութեամբ եւ հմտութեամբ պիտի հսկէին կատարուող աշխատանքներուն վրայ»: Հանգանակութեանց մանրամասն գումարները արձանագրած ենք այլուր, զանոնք իւրապատուկ աղբիւրներէ քաղելով (Ազգապատու մ Գ գիրք յօդ. 3681): Անոնց հիման վրայ մինչեւ 1967-ի վերջը արդէն իսկ գոյացած էր 500,000 տուարի պատկառելի գումար մը:

Վերանորոգման Աշխատանքները
Յայտնապէս նորոգութեանց խնդրոյ առարկայ էին արտաքին եւ ներքին կառուցումները, որոնցմէ

մեծագոյնը Տաճարին հսկայ գմբէթին նորոգութիւնն էր: Գմբէթին եւ ներքին մասերու երեք յարանուանութեանց հասարակաց, ինչպէս նաեւ սեփական մասնաբաժինները անպայման պիտի նորոգուէին, առաջին պարագային երեքը միասնաբար, եւ միւս պարագաներուն իւրաքանչիւրը իր սրբատեղին վերականգնելով: Չմոռնանք որ Երուսաղէմի մէջ փոխադարձ «իրաւունք»ի եւ «իրաւատէր»ի խիստ հարց մը եղած է միշտ ու կը մնայ ցարդ, երբ մանաւանդ խնդիրը նորոգութեանց կը վերաբերի: Հակառակ անոր սակայն, գործը ընթացած է համերաշխ մթնոլորտի մէջ որքան ատեն որ միջազգային օրինաչափութիւնները յարգուած են եւ հաշիւները քննութեանց ու հակակշիռի ենթակայ եղած:

Տաճարի հսկայ գմբէթը, 24 սիւներու վրայ բարձրացած, եղաւ արտաքին գլխաւոր մասը որուն

նորոգութիւնը իր լրումին հասաւ 1980 թուականին պատկան երեք յարանուանութեանց ծախքով: Հայոց բաժինը կ'ըլլար յաւելեալ 500,000 տուար, որուն 180,000-ը որպէս յաւելեալ յատկացում կը հասնէր դարձեալ Կիւլպէնկեան Հիմնարկէն: Չհաշուած այս վերջին կէս միլիոնը, հայեր արդէն յատկացուցած էին 1,500,000 տուար, որուն հետ միասին գմբէթին յատուկ գումարով ծախսած եղան ընդամէնը ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆ տուար, յիսուն տարի առաջուան արժէքով:

Տաճարէն ներս հայոց պատկանեալ վերանորոգուած բաժինները եղան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Երկրորդ Գողգոթայի վերնատան եկեղեցին, Երաշխաւոր Ս. Աստուածածնի մատուռը, Իւղաբերից Ս. սեղանը, Ուշաթափման սրբավայրը, Յովսէփ Արիմաթացիի գերեզմանը եւ մատուռը, Ս. Յովհաննէս Աւետարանչի մատուռը՝ Տաճարի գաւիթին մէջ, Հանդերձից Բաժանման մատուռը, ինչպէս նաեւ Լոյս Գերագմանին հայոց յատուկ իրաւունքներու բաժինը:

Միջազգային գետնի վրայ Տաճարին գլխաւոր սրբատեղիները որոնք երեք ազգերու կողմէ պիտի նորոգուէին իրենց ընթացքը գտան 1964 թուականին եւ յաջորդող տասնամեակին: Մասնաւորաբար

Քրիստոսի Գերեզմանը եւ անոր վրայ կառուցուած բոլորաշէն Տաճարը: Պատանա-տեղին եւ մուտքի մեծ դարպասը եղան առաջին ձեռնարկութիւնները, իսկ Տաճարին մնացեալ 20 մատուռները, որոնցմէ ոմանք հայերուն, եւ ուրիշներ յոյներուն կամ լատիններուն կը պատկանին, պիտի նորոգուէին իւրաքանչիւր սեփականատիրոջ դրամով:

Ըստ այսմ նախ նորոգուեցան Տաճարի արտաքին մասը եւ հարակից թեւին մաս կազմող սրբավայրերը միասնաբար, որոնք ասարտեցան 1966 թուականին հրատարակուած տեղեկագրին համաձայն, սպուած ՍԻՈՆ ամսագրի նոյն տարուան համարներուն մէջ: Նոյն տեղեկագրէն յայտնի կը դառնար որ առանձին համայնքներ սկսեցին եւ յարատեւ կը շարունակէին իրենց վերաբերեալ աշխատանքները իրենց սեփական մատուռներէն ներս:

Տասնամեայ սոյն մեծ ձեռնարկը իր պատուաբեր լրումին հասաւ, պատիւ բերելով Հայ Երուսաղէմին, Աթոռի Միաբանութեան, Հայ Ազգին, եւ մանաւանդ Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ, բոլորն ալ գիտակից Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան միջազգային դիրքի դարաւոր արժէքին եւ կարեւորութեան:

<p>ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԿԱԾ</p>	<p>ST. GREGORY ARMENIAN CHURCH Geragos BANQUET HALL OF PASADENA</p>	<p>NEWLY REMODELED</p>
<p>Now ready to host your</p> <ul style="list-style-type: none"> • Wedding • Baptism • Anniversaries • All other happy & sad events. <ul style="list-style-type: none"> • հարսանիք • Սկրտութիւն • Տարեդարձ • և ամէն ուրախ ու տխուր առիթներ: <p>ՎԱՏԷ 562-715-8730 VAHE</p> <p>Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'սպասարկենք</p>		

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
Leadership Council

*Seventh Anniversary Gala Banquet
in honor of the*

USC SHOAH FOUNDATION INSTITUTE
FOR VISUAL HISTORY AND EDUCATION

for championing the

ARMENIAN GENOCIDE DIGITIZATION PROJECT



USC
University of
Southern California



SUNDAY, APRIL 15, 2012

RECEPTION 5:30 PM

DINNER 6:30 PM

THE BEVERLY HILTON

INTERNATIONAL BALLROOM

9876 WILSHIRE BOULEVARD

BEVERLY HILLS, CALIFORNIA 90210

FOR INFORMATION CONTACT

ELIZABETH AGBABIAN (310) 476-5306 • DIANE CABRALOFF (562) 943-1081

ALICE CHAKRIAN (818) 388-6734 • LORI MUNCHERIAN (310) 936-4758

SAVEY TUFENKIAN (818) 956-8455

DON'T LET
THEIR VOICES
BE FORGOTTEN.

USC Dornsife

Dana and David Dornsife
College of Letters, Arts and Sciences